ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 33

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

146
Վ ե ն ա
Rédaction de Mechitaristengasse

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang."

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՔԱՂՑՐԵՂԷՆՆԵՐԻ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Կ. ՍԱՔԱՅԵԱՆՑԻ
Սոլոլակի փող., տ. Թալիբեանի, № 3.

Կարելի է ստանալ ամեն տեսակ ՊԱՍՔԱՆԵՐ, նոյնպէս և ՄԱԶՈՒՐԿԱ և ԿՈՒԼԻՉ, այլ և ՊԱՆՐՈՎ ՊԱՍՔԱ։
Ընդունվում են պատուէրներ և կատարվում են ամենայն ճշգրտութեամբ։ Խնդրեմ յարգելի հասարակութեան ուշադրութիւն դարձնել ընտիր յատկութեան վրայ։ Յարգանօք՝ Կ. ՍԱՔԱՅԵԱՆՑ։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ
ԱՂԵՔՍԱՆԴՐ ԵՐԻՑԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՔ
XIX-ՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ
(ՄԱՍՆ Բ. 1831-1842 Թ.)
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ VIII ԿԱՐԲԵՑՒՈՅ
և
ՊՈԼՈԺԷՆԻԷ
ԳԻՆՆ Է 2 Ռ. ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ 2 Ռ. 50 Կ.
Առաջին և երկրորդ հատորները միասին 4 ռ., ճանապարհածախսով 5 ռ.
(10—4)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սոսկալի կոտորած։
Չարլզ Ֆիցջերալդ։
«Daily News»-ի թղթակցի նամակը։
Տաճկական անցքութիւններ։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Բանտարկուած հայ հոգևորականներ։ Բուքարէստի պատգամաւ.։ Լոնդոնից։ Պետերբուրգից։ Վեհափ. հայկ. հարցի համար։ Քրն նիչ Ցանձն. սեպհական թարգմաններ։ Մուշից հեռագիր։ Վեհ. Հայրապետի արտասանած դամբանականը Ն.-Նախիջևանում։ Երևանից։ Նոր աւելացած դպրոցներ կովկասում։ Թէ ինչպէս են վարվում ամերիկացիք հնդիկների հետ. հայի կաշին և Սուվորինի ատամները։ Պետերբուրգից։ Ընդհանուր ռուսական ցուցահանդէս։ Թիֆլիզի քաղաքագլխի ընտրութիւն։ Երդ. հաւատարմ. խորհուրդ։ Գլխահարկի փոխարէն հողային հարկ։ Պետերբուրգից։ «Մարիա Ստիւարտ» գիրքը։ Խոհար. դարընթացն աւարտողներ։ Սրբ. Արիստ. Սեղրակեանի ստացած թրքական շքանշան կրելու թոյլտուութիւնը։
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ —Նամակ Կերասոնից։
ՖԵԼԻԵՏՕՆ.— Սև օրերից մինը։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՈՍԿԱԼԻ ԿՈՏՈՐԱԾ

(«The Daily News» մարտի 12).

Հրատարակում ենք այսօր մեր յատուկ թղթակցի վերին աստիճանի սրտաշարժ նամակը։ Դա ակներև հաստատում է Թիւրքաց դատապարտելի յանցաւորութիւնը նոր կոտորածների մէջ, և հաստատում է մի Թիւրք զինուորի խոստովանութեամբ, որի ցուցմունքը մեր թղթակիցն արձանագրել է վկաների առջև։ Դա մի մանրամասն ցուցմունք է. դրա մէջ յիշուած են և՛ տեղեր, և՛ թուեր, և՛ ժամանակներ. և դա կարգաւ մերկացնում է դժոխային չարութեան այնպիսի ահեղ պարագաներ, որոնց նմանը նոյն իսկ օսմանեան ցեղի պատմութեան մէջ դժուար է գտնել։ Կոտորածի նախընթաց դէպքերը Մուշի շրջակայքում, որքան էլ սոսկալի լինին, աննշան են համեմատելով վերջնական նախճիրքի հետ։ Թիւրքերը օրերով ու շաբաթներով պտոյտ են եկել կործանման դատապարտուած գիւղերի մէջ, քիւրդերին առաջնելով սպանութեան կոպիտ գործը գլուխ բերելու, իսկ ինքեանք կոտորել են միայն փախստականներին։ Զինուորն ասում է, թէ Թիւրքերն այրում էին Թշուառ բնակիչներին, հրդեհելով այն անտառները, ուր որ դրանք ապաստանել էին։ Նա պատմում է, թէ Թիւրքերը ոչ սեռի համար գութ ունէին, ոչ հասակի, և անխնայ կոտորում էին նոյն իսկ մանկանց և կանանց՝ հէնց որ դրանք պատահում էին ճանապարհին։ Բայց և այնչափ այդ բոլորը, որքան էլ ահաւելի լինի, մի լոկ նախերգանք է վերջին գործողութեան, որ է «Գէլիեգուզանի դքի կոտորածը»։ Մի քանի հարիւր հայ — տղամարդ, կին և մանուկ — ամեն կողմից շրջապատուած, վերջ ի վերջոյ անձնատուր են լինում իրենց քահանայի հետ միասին։ Առաջին զոհը քահանան է դառնում։

Անձնատուր մարդիկ սպասում են, և Թիւրք հրամանատարը հոգ է տանում նրանց մասին։ Նա կերակրում է նրանց, և մինչ նրանք ուտում են, կարծելով թէ դա մի կարեկցութեան շնորհք է, Թիւրքը հրամայում է իւր մարդկանց փորել երկու լայն և խոր փոս, որոնք պէտք է Թշուառների գերեզմանը դառնային։ Երբ որ փոսերի փորումը վերջանում է, զինուորներին բաժանում են ջոկ ջոկ վաշտերի, և ամեն գիշեր—շաբունակ մի շաբաթ կամ տասն օր— այդ դահիճ վաշտերից մէկը կամ միւսը առաջվում է փոսի մօտ։ Փոսի մօտ գալուն պէս վաշտը գտնում է արդէն սպասող Թշուառ մարդկանց մի պատրաստ խումբ, և մի առ մի սպանում բոլորին։ Այս գործը, ինչպէս ասացինք, շարունակվում է օրերով, մինչև որ գրեթէ բոլոր փախստականները, որոնք ձորն են գալիս ողորմութիւն գտնելու յուսով, կոտորվում են։ Մնացածներն ազատվում են, երբ որ Մուշից գալիս է փաշան, կարծելով, թէ արդէն ժամանակ է վերջ դնել կոտորածին։

Այդ է փոսի ահագին կոտորածը, որի պատմութիւնը հաստատեցին երկու լիովին անկախ մարդիկ. մէկը «Daily Telegraph» ի թղթակիցն է, միւսը մերը։

Մեր թղթակցի հաստատութիւնը լիակատար է։ Հմուտ լինելով Թիւրքերէն լեզուին, նա հնար է գտել արձանագրելու կոտորածին մասնակից եղած Թիւրք զինուորի վկայութիւնը —զինուորի, որի խղճահարութիւն արդէն ցոյց է տալիս, որ այդ զարհուրելի մարդասպանութիւնը մի արտակարգ բան է։ Ակներև է, որ այդ վկայութեան մէջ մեր առջև հանդէս է գալիս մի հիմնովին նախապատրաստուած և գազանաբար իրագործուած չար ոճիր, որ մրցում է նոյն իսկ տասն և ինն տարի սրանից առաջ տեղի գտած բուլղարական նախճիրների հետ։ Ինչքան որ անօրինակ է այդ ոճիրը, այնքան էլ անօրինակ պիտի լինի Եւրոպայի միաձայն պահանջմունքը՝ պատուհասելու մարդասպան սրիկաներին, և անօրինակ՝ այդ տեսակ ոճիրներին ընդ միշտ վերջ դնելու միջոցը։

Հայոց ազգի այս ճգնաժամին դիւանագիտութեան սովորական հաշիւները կարող չեն տեղի ունենալ պետութեանց խորհրդակցութեան մէջ։

ՉԱՐԼԶ ՖԻՑՋԵՐԱԼԴ

Մեծ վիշտ պատճառեց քաղաքական և գրականական շրջաններին, կարդում ենք «Daily News»-ում, միստր Չարլզ Ֆիցջերալդի անբացատրելի կերպով անհետանալն Արևելեան Եւրոպայից։ Նա երբեմն-երբեմն աշխատում էր որպէս մեր լրագրի թղթակից։ Իւր պաշտօնի և ուրիշ մասնաւոր գործերով նա թողել էր Սոֆիան անցեալ յունվար ամսին և հասել էր Վիեննա փետրուարի 1-ին կամ 2-ին։ Նրա վերջին նամակը փետրուարի 3 թուականն ունէր և գրուած էր Վիեննայից. և թէպէտ նրա բարեկամներն ու ազգականները ամենայն ջանք գործ դրին, բայց և այնպէս մինչև այժմ հետքն անգամ չեն գտել։ Նա շատ էր ճամբորդել Հարաւային և արևելեան Եւրոպայում, և որովհետև նրան երկու անգամ սպառնացել էին իւր կարծիքների ու համոզմունքների համար, ուստի առիթ կայ երկիւղ կրելու, թէ նրա հետ մի վատթար օյին խաղացած կը լինին։ Այս գաղտնիքը պարզելու համար արտաքին գործոց նախարարը պատուիրել է բրիտանական դեսպաններին փութաջան խուզարկութիւն անել և որոնել նրան։ Լսած ենք, որ Ֆրանսիական կառավարութիւնն էլ միևնոյն ընթացքն է բռնել, որովհետև միստրիս Ֆիցջերալդը մի ֆրանսիական քաղաքացուհի է։

———

Միևնոյն լրագրից իմանում ենք, որ Պար. անգ. միստր Ֆրէնսիս Ստեվնսընը պիտի մատուցանէ միստր Գլադստոնին մի հայերէն Աւետարան, որ առաքուելու է Թիֆլիզաբնակ հայերի կողմից, որպէս նուէր գերարգոյ ջէնտլմէնին։ Այդ ձեռագիր հատորը կը դրուի միստր Գլադստոնի Հավարդէնի աստուածաբանական մատենադարանի մէջ. իսկ ընծայաբերութիւնը տեղի կ՚ունենայ Լօնդոնում, ուր էքս-պրէմիէրն առ ժամանակ մտադիր է դադար առնել հարաւային Եւրոպայից վերադառնալիս։

———

«The Central News» ը լուսաբանելով Բ. Դռան բռնած դիրքը հայկական կոտորածի վերաբերմամբ, հաղորդում է հետևեալը. Պարլամէնտի անդամներից երկու հոգի որոշել էին նիստերի սկսուելուց առաջ Պոլիս գնալ. սակայն Թիւրքիայի Լօնդոնի դեսպանատնից իմաց տուին, թէ նրանց անցագրերը չեն վաւերացուիլ։ Դրա պատճառը, ինչպէս իմացանք, այն է եղել, որ մեծարգոյ ջէնտլմէնները լաւ յայտնի են որպէս հայկական դատի յաջողութեան ձգտող անձինք։

«DAILY NEWS»-Ի ԹՂԹԱԿՑԻ ՆԱՄԱԿԸ

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐՈՒՄԸ։ — ՄԻ ԹԻՒՐՔԻ ԶԱՐՀՈՒՐԵԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ։ — ՍՈՍԿԱԼԻ ԱՆՑՔՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՎԱՐԻ ԶԳՈՒԻԼԸ ՍՈՒԻՆՆԵՐԻ ԾԱՅՐՈՎ։

Հետևեալ նամակը, որ ստացել ենք հայկական նախճիրների գործը քննող մեր յատուկ թղթակցից, մռայլ գոյներով նկարագրում է «Փոսի դէպք» անունով յայտնի ահռելի կոտորածը։ Հարկ ենք համարում ասել, որ մեր թղթակիցը Թիւրքերէն լեզուին վարժ լինելով ձեռնհաս է առանց միջնորդի և բուն աղբիւրից գրի անցնել Թիւրք զինուորների, ականատես վկաների և կոտորածին մասնակցող անձանց վկայութիւնները։ Մեր թղթակիցը հարկաւ չէր կարող հեռագրաթելի յանձնել այս կարևոր դոկումէնտը, և դա հասել է մեզ մի վստահելի մարդու միջնորդութեամբ։

ԳՈՄԱՇՈՐ ԳԻՒՂ (ռուսաց սահմանագլուխ), Փոքր-Ասիա, փետր. 28.

Անգլիայում մեծ կասկածով ընդունեցին, այժմս էլ նոյն կասկածով են ընդունում հայերի հաղորդած փաստերը անցեալ օգոստոսին և սեպտեմբերին Սասունում տեղի գտած սոսկալի աղմուկի մասին։ Եւ իրաւ շատերը կարծում են, թէ հայկական աղբիւրից ծագող ամեն մի պատմութիւն անպատճառ ծայրայեղ պիտի լինի, եթէ ոչ լիովին սուտ։ Եւ մի թէ կարելի՞ է, ասում էին, փութալ դատապարտել Թիւրքաց հեզաբարոյ պաշտօնակատարներին, հիմնուելով այդ անպատասխանատու վրդովիչների աղաղակի պէս խօսքի անբաւարար վկայութեան վրայ։

Ես ամենևին չեմ վիճում և չեմ հերքում, թէ անիրաւ յարձակումների, անգութ կոտորածների, անպաշտպան կանանց և մանկանց անլուր լլկանքի, հիմնայատակ արուած գիւղերի և սպառսպուռ սրի մատնուած ժողովրդի մասին շրջող պատմութիւնների մէջ կան բաներ, որոնք լաւ չեն յերիւրվում իրար հետ ժամանակի ու տեղի նկատմամբ, և կամ թէ մէկը միւսի հետ շփոթվում են։ Սակայն պէտք չէ մոռանալ, որ հեռաւոր լեռների նախնական ժողովուրդը, որի մասին գրում եմ, շատ թերի գաղափար ունի ժամանակի վրայ։ Նրա հաշիւները միշտ սկսվում են տարուայ եղանակներից,—որոնք գիւղացու կեանքի սահմաններն են,—աշնան ցանքից կամ թէ ձմրան ձիւնի հալուելուց, գարնան խոտը կտրելուց և կամ թէ վերջին ամրան ցորենի հունձքը ժողովելուց։ Եւ եթէ նա այդպէս էլ չանէր, դարձեալ մենք մեղադիր չէինք լինել, որ նա փոքր ինչ շփոթ կերպով և կամ թէ շատ անճիշդ է առաջ բերում այն դէպքերի շարքը, որոնք զրկել են նրան ստացուածքից, տնից ու տեղից, ազգականներից, ամուսնուց ու զաւակներից, —դէպքերի, որոնք ի չիք են դարձրել գէթ ապագային սնունդ գտնելու նրա վերջին յոյսը, ստիպել են նրան մի անանուն, մի հալածական աղքատ դառնալ և ցնցոտիք հագած՝ իբրև տարագիր թափառել Փոքր-Ասիայի անհիւրընկալ ճանապարհների վրայ, ուր հէնց առաջին մահմեդականը կարող է սպանել նրան, համոզուած լինելով, թէ իւր արածը մի բարեպաշտական գործ կը լինի։ Այս է ահա, բառիս բուն և ճիշդ առումով, Վեհափառ Սուլթան Աբդուլ Համիդի իմաստուն և բարեգութ կառավարութեան ներքոյ ապրող հազարաւոր հայ հպատակների իսկական վիճակը Տաճկաստանի այս մասում։ Որ ասածս վեր ի վերոյ և շտապովի կարծիք չէ,—այդ ես պատրաստ եմ բացարձակ կերպով հաստատել։ Եթէ ես կենդանի մնամ, այնպիսի փաստեր կը հրատարակեմ ի լուր աշխարհի, որոնք անթերի պարզութեամբ կապացուցանեն, որ ես ոչ թէ ստուարացնում եմ այս արհաւիրքներով լցուած երկրի կացութիւնը, այլ դեռ մեղմացնում։

Այժմ ես կը փութամ քաղաքավարութեան և ազնիւ կռուի բոլոր կանոնները պահել։ Ամեն խնդրի մէջ երկու կողմ կայ, և արդարութիւնը պահանջում է, որ երկուսին էլ ականջ դնենք։ Եւ ինչպէս որ մենամարտի մէջ առաջին գնդակ արձակելու իրաւունքը շնորհվում է հրաւէր ստացողին, այնպէս էլ, իմ կարծիքով, առաջին խօսքը, այս դիպուածում, հարկաւոր է տալ ամբաստանուածին։ Թիւրքերը և նոյն իսկ Սուլթանի առաջին նախարար՝ մեծ վեզիրը չեն ուրանում, որ Սասուն և Տալուորիկ գաւառներում շփոթմունքներ են պատահել։ Արդէն ստուգուած է, որ մի քանի տարիներէ ի վեր ընդհարումներ են տեղի ունեցել քրիստոնեայ և մահմեդական բնակիչների մէջ։ Արդ լիովին անաչառ լինելու համար՝ ես ուզում եմ միջոց տալ արդարանալու նոյն իսկ ամենաստոր յանցաւորին, նոյն իսկ բարբարոս և գազանամիտ վայրենուն, նոյն իսկ Սուլթանի Փոքր-Ասիայում գտնուող սպաներին, —և այս պատճառով ամենից առաջ աշխատեցայ մի մահմեդական անկախ վկայութիւն ձեռք բերել Ճատախում և Տալուորիկ ձորում անցեալ աշնան պատահած դէպքերի մասին։

Մի այդպիսի վկայութիւն ձեռք բերելը հեշտ բան չէ։ Սասունի չարահամբաւ կոտորածներին մասնակից եղած Թիւրքերը մի տագնապիչ լռութիւն են պահում։ Բայց որ այդ գաւառում անպարտ և կրթութեան առիթ չըտուող ժողովրդի մի վերին աստիճանի արիւնահեղ, գլխային չարութեամբ նախադիտուած և նզովելի վատթարութեամբ գլուխ բերուած սպանութիւն է կատարուել,—որ ընդ միշտ պղծելու է նոր պատմութեան էջերը,—այդ ես ժամանակին կ՚ապացուցանեմ խորտակիչ փաստերով և նոյն իսկ յանցաւորների շրթունքով։

Առ այժմ, իբրև պարտքիս մէկ մասը, տալիս եմ ձեզ, Սուլթանի մի բարեպաշտ իսլամ հպատակի բերնից լսելով, հետևեալ պատմութիւնը։ Այդ մահմեդականը մի զինուոր է, որ իւր պաշտօնը կատարելիս անձամբ տեսել է Սասունի քստմնելի ողբերգութեան իւրաքանչիւր պատկերը և հետևելով հրամանին, իւրովսանն մասնակցել է սոսկալի ոճիրներին։

Միայն մի քանի անհրաժեշտ խօսք կ՚ասեմ այդ վկայի մասին։ Նա մօտ երեսուն տարեկան մի մարդ է։ Վեց տարի ծառայել է բանակի մէջ և կոտորածների միջոցին ենթասպայ է եղել հետևակ զօրքի 25-րդ գնդում Կրէտացի Իսմայիլ բէյի իշխանութեան տակ, որ և ամեն պատահած բաների անմիջական պատասխանատուն է։ Այժմ նա թողել է զօրքը և փախել իւր ծննդեան երկրից՝ Ռուսաց սահմանների մօտ մոռացութիւն գտնելու համար։ Ներելի չէ ինձ աւելի բան ասել նրա մասին, որովհետև եթէ ճանաչուի, նրան իսկոյն կը մատնեն։ Իրեն սպառնացող վտանգի մասին նա ինքն բնաւ չէ մտածում։ Արդէն մօտեցել է գերեզմանին։ Մի յայտնի հիւանդութիւն չունի և որ և է որոշ ցաւով չէ տանջվում, բայց և այնպէս քայլ առ քայլ մօտենում է մահուան, իւր անվերջ ներքին տագնապից մաշուելով։ Դրա պատճառը գուցէ այն է, որ սաստիկ ջղային է և զգայուն։ Ինչ և իցէ. ես երեք ժամ մնացի նրա մօտ՝ նրան հարց ու փորձ անելով (ձեռնհաս վկաների ներկայութեամբ), և այդ ընկճուած թշուառի կերպարանքը, թախծագին տրտմութիւնը և անպարտելի ու յամր յուսահատութիւնը մի այնպիսի տպաւորութիւն արին վրաս, որ դիւրին չէ փարատել։ Իւր ամբողջ պատմութեան միջոցին նա ոչ մի անգամ ձայնը չբարձրացրեց։

Թող անգլիական հասարակութիւնը կարդայ նրա պատմածը և դատաստան կտրէ։

Մուշից մեկնելով նրա գունդը հասնում է կէս գիշերին իւր առաջին բանակատեղը՝ հետևեալ կռուի ասպարէզի մօտերքը, Շատախի նահիէ գաւառում։ Տեղի անունն է Մերգէ-Մոզան Այդտեղ բանակած էին և ուրիշ վաշտեր։ Հեռուից հրացանների որոտ էր լսվում։ Գունդը չորս օր այդտեղ մնաց։

Այդ միջոցին վկան իմանում է, որ շրջաբնակ հայերից ունեւոր անձինք՝ իրենց խոստացուած հովանաւորութեան փոխարէն փող են վճարել իւր վաշտի սպաներին և ենթասպաներին,—նոյնպէս և քիւրդերին։ Քիւրդերը շարունակ բանակ են գալիս եղել և գնում։

Հինգերորդ օրը, ընթրիքից յետոյ, վկայի վաշտը ճանապարհ է ընկնում դէպի Ձէնիկ,—հեշտ ճանապարհ։ Նրանք գտնում են կռիւն սկսած։ Տներն արդէն այրվում էին։ Գիւղացիք սկսել էին փախչել, և նրանց հրացանները բոլորովին լռել էին։ Վաշտերը երկու անգամ հուր տեղացին նրանց վրայ երկու լեռնային թնդանօթներից, սակայն հետամուտ չեղան գիւղի սահմանից դուրս։ Այդ միջոցին Բաթիկափուտներն (?) և Վերգուլները (?) կողոպտում էին հրդեհուած տները և սպանում նրանց մէջ մնացող մարդկանց։ Զինուորները չէին մասնակցում այդ բանին, այլ մնում էին գիւղի դրան առջև և սպանում էին իրենց մօտով անցնող փախստականներին։

Հետևեալ առաւօտեան զինուորները խաղացին դէպի Գէլիէգուզան։ Նրանք գտան ճանապարհի վրայ շատերին սպանուած, ոմանց վիրաւոր, և բազմաթիւ փոքրիկ երեխայք։ Դրանց բոլորին կոտորեցին։ Երբ որ զինուորները Գէլիէգուզան հասան, դա արդէն շրջապատուած էր և կռիւը (կրակը ?) սկսուած։ Նրանք երկու կամ երեք օրով կանգ առին գիւղի դրսի կողմը. ամեն օր յարձակումներ էին լինում գիւղի վրայ, բայց գլխաւորապէս քիւրդերի կողմից, որովհետև զինուորները ձեռնպահ էին։ Այդ օրերի ընթացքում վկան դարձեալ լսում է, թէ հայերն եկել են բանակ և փող տուել սպաներին։ Բայց թէ արդեօք նրանք վերադառնում են Գէլիէգիւզան, թէ սպանվում,—այդ նա չգիտէ։ Յանկարծ մի գիշեր վաշտերը հրաման են ստանում յարձակուելու գիւղի վրայ։ Դարձեալ գործ են դրվում լեռնային հրետները, և դրանց թևարկութեան տակ գիւղի մօտակայ տները իսկոյն հրդեհվում են։ Զինուորները հրացան էին ձգում բարձունքից (M. B. ես կարծում եմ՝ կամ ժայռերից և կամ թէ բլրի զառիվեր շաւղից, բայց թէ յատկապէս որից—հաստատ չգիտեմ). իսկ քիւրդերը նետուեցան փողոցի մէջ, ուր օրհասական տագնապը մեծ ջարդ յառաջ բերաւ։ Քիւրդերից շատերը սպանուեցան կանոնաւոր զօրքի գնդակներով։ Կռիւը բաւական երկար շարունակուեցաւ՝ մինչև որ բնակիչները սկսան հեռանալ գիւղից։ Այն ժամանակ—արդէն լուսացել էր— վաշտերին հրաման տրուեցաւ հալածել նրանց։ Սակայն զինուորներից ոմանք մնացին և սկսան քիւրդերի հետ միասին տները կողոպտել։ Գիւղացոց մեծ մասը կոտորուեցաւ գիւղի և ժայռերի միջև։

Յաջորդ օրը վաշտերը պատուէր ստացան յառաջ գնալու։ Դրանց հետ միացել էին և ուրիշ վաշտեր, և նրանք լեռնային հրետներ ունէին։ Ճանապարհը շատ վատ էր, այնպէս վատ, որ ջորիները չէին կարողանում յառաջ քաշել թնդանօթները, և պէտք էր լինում, որ զինուորները բարձրացնեն դրանց ժայռերի վրայ։ Այդ տեղ շատ դժուար անցանելի կիրճեր կային, և շատ ժամանակ հարկաւոր եղաւ Տալուորիկի սահմաններին հասնելու համար։ Թիւրքերը շարունակ միանում էին զօրքի հետ։ Մի քանի ժամանակից յետոյ (չեմ կարող ճիշդ որոշել) եկան ուրիշ զինուորներ և աւելի շատ քիւրդեր։ Այնուհետև նրանք պաշարեցին գիւղերը՝ ճիշդ այն եղանակով, ինչպէս և առաջ, այսինքն՝ քիւրդերին յառաջ մղեցին պէտք գործը կատարելու և գիշերային յարձակումը հոգալու համար, մինչդեռ վաշտերը կրակ էին տալիս մօտակայ լեռներից։ Հետևեալ օրը նրանք սկսան տները ռմբակոծել և գիւղերն առնել. Մօտերքում կար մի անտառ, ուր գիւղացիք պատսպարուել էին,—շատ էր մարդկանց, կանանց և տղայոց թիւը, բայց միայն Աստուած գիտէ թէ որքան էին յատկապէս։ Ան-

տան մի կողմից կանգնած էին քիւրդերը, միւս կողմից գնդերը. Ահա այդ միջոցին՝ բոլոր վեց հրետն էլ կրակ ժայթքեցին անտառի վրայ, և իւրաքանչիւրը տասն և երեք անգամ ռումբ արձակեց։ Ամբողջ անտառը բորբոքուեցաւ։ Անտարակոյս պատսպարուողներից ոմանք փախան. բայց մեծ մասը կամ ռումբերին կամ բոցերին զոհ դարձաւ։

Տալուորիկի գիւղերից մէկում մի մեծ տուն կար, ուր փակուած էին բազմաթիւ կանայք, մանկունք և ծերեր։ Հրամայեցին այդ տունն էլ ռմբակոծել։ Տունըն այրուեցաւ, և մէջը գտնուողներից ոչ մէկն էլ կենդանի չմնաց։ Անտառում բռնուեցան երկու աղջիկ. մէկին առաւ գնդապետը, միւսին մայեօրը։ Յետոյ նրանց տարան Գելիէգուզան, բայց այնտեղ նրանք անհետացան։ Վկան ոչ մի ուրիշ հայ կին չէ տեսել իւր վաշտում։ Արդեօք այդ երկուսն էլ սպանուեցան Գէլիէգուզանում,—նա չգիտէ. ոչինչ չգիտէ նաև սուրբ Մեսրոբ եկեղեցու մասին։

Գելիէգուզանում գումարուեցան գըրեթէ բոլոր գնդերը և մօտ երկու շաբաթ այնտեղ մնացին։ Երկրորդ թէ երրորդ օրը նրանց մօտ եկաւ Գելիէգուզանի կուից ճողոպրած և Անդոկ սարին ապաւինած հայերի առաջին խումբը։ Նրանք առաջուց իմաց էին տուել, թէ գալիս են անձնատուր լինելու և հովանաւորութիւն խնդրելու Սուլթանի զօրքից։ Առաջին խմբում կը լինէին 450-ից մինչև 500 հոգի՝ տղամարդ, կին և մանուկ։ Նրանք ունէին մի առաջնորդ տանուտէր։ Երբ որ նրանք նեղ ձորը մտան, ուր զօրքը նստած էր, զինուորները նրանց ետևից ձորի մուտքը փակեցին։ Գնդապետ Իսմայիլ բէյը մօտեցաւ տանուտէրին և հրամայեց բռնել նրան։ «Ո՞վ է ձեր մեծը», գոչեց նա, դառնալով բազմութեան։ «Ես եմ», պատասխանեց տանուտէրը (քեօհվան), և մարդիկ նորից հարցուելով, ասացին.—«Դա է»։

Քեօհվա ասելը՝ գլխաւոր կամ առաջնորդ ասել է. հանգամանքը բերմամբ այդ միջոցին Սասունցոց մէջ գիւղի առաջաւորը մի քահանայ էր։ Մի ուրիշ վկայութեամբ, որ ես տակաւին չեմ ստուգել, տրամադրուած եմ կարծելու, թէ թիւրք ենթասպայի յիշատակած քեօհվան ոչ այլ ոք է, բայց եթէ Սէմալի Տէր Օհաննէս քահանան, Սէմալի, որ Ճատախի քարուքանդ եղած չորս գիւղերից մինն է։ Սրան սպանեցին։

Այնուհետև նրան հետևող մարդկանց մի կողմ տարան և ուտելու բան տուին։ Նրանք գոհ էին, որ վերջապէս ազատուել են աղէտից։ Հետևեալ օրը աւելի շատուոր մարդիկ եկան։ Ձորի մուտքն ու ելքը պահպանուած էր զինուորների երկու շղթայով, որոնք թոյլ էին տալիս ներս մտնել, բայց դուրս գալն արգելում։ Երկրորդ օրը զօրքի ջոկատներից մէկը հրաման ստացաւ երկու ահագին փոս փորել մի սեպ ժայռի զառիվայրում, որ մի անձուկ խոռոչք էր կազմում գիւղի եզերքին։ Խոռոչքի յատակում մի փոքրիկ հեղեղ էր հոսում, և շուրջն երևում էին քարայրներ, ուր գիւղացիք սովոր էին խոտ պահել։

Այդ օրուայ արեգակը մայր մտնելու միջոցին զինուորները հրաման ստացան շարուելու, և սպաները նրանց գծերի երկարութեամբ անցնելով, այսպիսի հրաման տուին.

«Առաջին դասակի (բոլուկ) 10 հոգուց չորսը թող յառաջ գան»։

«Երկրորդ բոլուկի 15 հոգուց չորսը թող յառաջ գան»։

«Երրորդ բոլուկի 10 հոգուց թող հինգը յառաջ գան»։ Եւ այսպէս բոլոր դասակներից մարդիկ ջոկուեցան։

Այնուհետև դասակներն վերադարձան դէպի իրենց բանակը և ընթրեցին. իսկ ընտրուած զինուորներին հրամայուեցաւ առանձին նստել և ուտել՝ ջոկ ջոկ խումբով։

Երբ որ գիշերուայ մութը կոխում էր, սպաները գալիս էին և ասում. «Առաջին ջոկատի մարդիկ այս ճանապարհով կերթան»։

Եւ նրանց տանում էին ձորի ստորոտը։ Այնտեղ նրանք գտնում էին խումբ խումբ գիւղացիք—այր, կին և մանուկ, թուով չիսուն, երբեմն եօթանասուն և աւելի։

Այն ժամանակ սպան պատում էր գիւղացոց խմբից տասն և քսան հոգի, և հրամայում զինուորներին.

«Սպանեցէք դրանց։

Իմ հարցման, թէ արդեօք հայերը զինուած էին, նա պատասխանեց, թէ «նրանք գոտու դանակից զատ՝ ուրիշ ոչինչ չունէին»։

—Արդեօք նրանք դիմադրում էին, հարցրի ես։ Զաւուշը պատասխան տուաւ, թէ մինչև վերջը նրանք չգիտէին իրենց ճակատագիրը, և երբ որ վերջին հրամանը տրուեցաւ, նրանք արդէն սուինների դէմ էին կանգնած։

—Արդեօք շատ երեխայք կային նրանց միջև, շարունակեցի ես հարցնել։ «Շատ շատ», ասաց նա, «և փառք եմ տալիս Աստուծոյ, որ ինքս ոչ մի մանուկ չեմ սպանել»։

Այդ միջոցին ես լսեցի նրա ընկերոջ խօսքերը. «Հապա քանի՞ մարդ ես սպանել դու»։ Եւ նա պատասխանեց կամացուկ. «Աստուած գիտէ։ Ես կարծում եմ՝ հինգ մարդ։ Գուցէ եօթը։ Ի՞նչ անէի։ Ինձ հրամայուած էր»։

Այդ խօսքերը նա ինձ չասաց, և դըրանք ինձ չէին ուղղուած։

Ես հարցրի, թէ արդեօք շատ երեխայք կային սպանուածների մէջ. Պատասխան. Զաուշը հառաչեց և գըլուխը թօթուելով լուռ կեցաւ։ Յետոյ ասաց, ուսերը յուսահատաբար ցնցելով. «Մենք զինուորներ ենք, ինչ կարող էինք անել»։ Եւ յարեց, որ երբ մէկը դանդաղում էր, բէյը (նա չասաց, թէ յատկապէս ո՞ր բէյը, բայց հարկաւ խօսքը Իսմայիլի մասին էր) իսկոյն սպանում էր նրան ատրճանակով ու սրով. «Փառք եմ տալիս Ալլահին, ասաց նա, որ ես տղայք չեմ սպանել»։

Հարցրի, թէ ինչպէս վերջացաւ բանը։ Նա ասաց. «Բանն աւելի շուտ կը վերջանար, որովհետև քիչ մարդ էր մընացել և երկու օրէ ի վեր ոչ մի հայ ձոր չէր եկել։ Բայց մուշիր Զէքի փաշան ուշ հասաւ Մուշից, և միայն նրա գալուց յետոյ հրաման ելաւ դադարեցնել կոտորածը»։

Իմ հարցման, թէ արդեօք այնուհետև էլ որևէ գիւղացի սպանուեցաւ, նա իսկոյն չպատասխանեց, և յետոյ ասաց. «Ոչ»։ Վերջապէս յայտնեց, թէ գուցէ այլ ևս մի քանի ուրիշ կոտորածներ պատահած լինին։

Երբոր հարցրի, թէ արդեօք ամբողջ կուի միջոցին շատ մարդիկ սպանուեցան կանոնաւոր գնդերից, նա պատասխանեց.

«Սկզբից մինչև վերջը ես չեմ լսել, որ գէթ մի զինուոր վիրաւորուած լինէր, ուր մնաց թէ սպանուած. և ես չեմ հաւատում, որ ամբողջ զօրքից գոնէ մի մարդ վնասուած լինի։ Անտարակոյս շատ քիւրդեր սպանուեցան, և յատկապէս կուի առաջին օրերը»։

Վերջապէս հարցրի, թէ նա տեսա՞ծ էր որևէ ուրիշ պատերազմ, և նա ասաց. «Ոչ», և աւելացրեց. «Աստուած տայ, որ այլ ևս երբէք արիւնհեղութիւն չտեսնեմ»։

—

Այս սոսկալի պատմութիւնն այնքան պարզ է, որ իմ կողմից որ և է մեկնութիւն տալն աւելորդ է։

Փ. Վ.

ՏՃԿԱԿԱՆ ԴԱԶԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

(«Новости»)

—

Daily News լրագրի թղթակիցը հաղորդում է մի տաճիկ ենթասպայի ցուցմունքները, որ ինքն անձամբ մասնակցել է, իւր մեծաւորի հրամանով, հայերի կոտորածին և հինգ հոգու իւր ձեռքով ուղարկել է յաւիտենական աշխարհը։ Անգղիացի թղթակիցը պատահմամբ հանդիպում է սահմանակից ռուսական գիւղում այդ վկային, որ մահամերձ հիւանդ վիճակի մէջ պառկած է լինում մահճում։ Թղթակիցը երեք ժամ անցնում է նորա մահճի մօտ և պատասխանատու վկաների ներկայութեամբ գրում է նորա ցուցմունքը։ Այդ մարդը 30 տարեկան է և վեց տարի ծառայած է տաճիկ զօրքի մէջ։ Հայկական անկարգութեանց ժամանակ նա գտնուելիս է եղել գնդապետ Իսմայէլ բէյի հրամանատարութեան ներքոյ, որ բնիկ Կրետէ կղզուց է և որի վերայ գլխաւորապէս ընկնում է պատասխանատուութիւնը կատարուած խստութեանց համար։

«Տաճիկ ենթասպայի պատմութեան մէջ նշանաւոր են երկու դէպք. անտառային հրդեհը Տալուորիկում և Գելիէգուզանի կոտորածը։

Վերոյիշեալ անտառում ապաստանել էր բաւական մեծ բազմութիւն կանանց, տղամարդոց՝ և երեխանց։ Որքան էր դոցա թիւը, ճշդութեամբ յայտնի չէ։

Զինուորները շրջապատեցին անտառը։ Մի կողմից քրդերն էին և միւս կողմից կանոնաւոր զինուորները։ Անտառի վերայ դարձրին վեց թնդանօթների բերանները և սկսան արձակել նրանց և հրդեհեցին անտառը։ Կարճ միջոցում ամբողջ անտառը կրակի մէջ էր, և որոնց խընայեցին հրդէնքի գնդակները, զոհ եղան կրակին. Նոյն վիճակի ենթարկուեցաւ և մի փոքրիկ գիւղ, ուր գտնվում էին շատ ծերունիք, կանայք և երեխայք։ Նրան հրդեհեցին և բոլոր բնակիչները կենդանւոյն այրուեցան։ Գելիէգուզանի կոտորածը տևեց մօտ 10 օր։ Երբ 500 հայեր, տղամարդիկ, կանայք և երեխայք բանակեցան Սէմալում Տէր-Յովհաննէս քահանայի առաջնորդութեամբ, գնդապետ Իսմայիլ բէյը այդ իմանալով, իսկոյն շրջապատեց այդ բանակը պա՛ապաններով և իւր մօտ հրաւիրեց նորա հրամանատարին, որին և սպանեցին։ Մնացած բոլոր հայերին մի կողմ տարան, և որովհետև նրանց կերակուր տուին ուտելու, նոքա ուրախ ցան, կարծելով թէ նոցա տանջանքներին վերջ դըրուեցաւ։ Միւս օրը եկան բազմաթիւ այլ հայ փախստականներ էլ։ Զինուորներն ամեն եկողին թողնում էին, իսկ դուրս գնալ ոչ ոքին չէին թողնում։ Երկրորդ օրը զինուորները սկսան փորել երկու մեծ փոս բլրակի ստորոտում, այստեղ վազում էր մի աղբիւր և մեկուսի գտանվում էին այրեր, ուր բնակիչները սովորաբար պահում էին իրանց խոտը։ Արեգակի մայր մտնելուց յետոյ իւրաքանչիւր վաշտից կանչուեցան մի քանի զինուոր։ Երբ գիշերը վրայ հասաւ, զինուորներին հրամայուեցաւ գնալ այրերը, ուր նոքա կարող էին գտնել 20-30 հոգի, գուցէ և աւելի։ Տաճիկ սպան հրամայեց զինուորներին՝ սպանել ամենքին և դիակները գցել փոսի մէջ։ Հրամանը կատարուեցաւ։ Հայերը բոլորովին ա՛զէն էին, նոքա մինչև անգամ գրպանի դանակ չունէին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Րէյտերի գործակալութիւնը մարտի 21 հեռագրով յայտնում է Պոլսից «Daily News»-ին, թէ Սուլթանը հրամայել է արձակել քաղաքական յանցաւորութեան համար գաւառներում *բանտարկուած հայ հոգևորականներին*։

* * *

«Central News» լրագիրը հաղորդում է, թէ մարտի 18-ին Բուքարէստից եկաւ մի յատուկ պատգամաւոր Փրանցիս Սէյմուր Ստէվէնսընի մօտ և յանձնեց նրան Անգլօ-հայկական Ընկերութեան համար 1000 ֆունտ ստերլինգ և նոյնպէս շատ նշանաւոր փաստաթղթեր Սասունի անցքերի վերաբերեալ։ Նոր պատգամաւորը բերաւ շնորհակալութեան ուղերձ Ստէվէնսընին, որ նա այնքան հոգս է տանում թշուառ հայերի վիճակի մասին։

* * *

ԼՈՆԴՈՆԻՑ Ռուսաստանի գործակալութիւնը մեզ հեռագրում է. «Times» լրագրի մէջ տպագրուած է արժանահաւատ թղթակցի երկար հաշիւը, որ անձամբ քննութիւն է կատարել Հայաստանում, գազանութիւնները կատարուած տեղում։ Թըղթակցութեան մէջ հաստատվում են հայերի հետ խստութեամբ վարուելու ամենասոսկալի փաստերը։

Լորդ Կիմբերլէյին ներկայացաւ Անգլօ-Հայկական Ընկերութեան պատգամաւորութիւնը և խնդրեց միջոցներ ձեռք առնել յօգուտ հայերի։ Կիմբերլէյը մեծ համակրութիւն արտայայտեց պատգամաւորութեանը և ասաց, որ մեծ դժուարութիւններ կան գործն այնպէս վարելու որ արևելեան հարցը կրկին չզարթնի։ Անգլիայի միայնակ գործունէութիւնը բաւական չէր լինի, բայց Կ. Պոլսոյ անգլիական դեսպանը հաւատացնում է թէ Ռուսաստանը և Փրանսիան նոյնպէս վերջնականապէս համոզուած են, թէ ռէֆորմներն անհրաժեշտ են։ Կիմբէրլէյը համոզուած է թէ երբ ժամանակը հասնի, այդ պետութիւնները Անգլիային սրտագին գործակցութիւն ցոյց կը տան։ Իրերի այժմեան դրութիւնը Ռուսաստանն անպայման վտանգաւոր է համարում։ Ռուսաստանը նոյնքան է ցանկանում վըտանգի առաջն առնել, որքան և Անգլիան և Գերմանիան։ Հէնց որ ժամանակը գայ, Գերմանիան միւս տէրութիւններից յետ չի մնալ։ Եթէ միայն հայերին արդարութեամբ կառավարեն, սուլթանը նրանց մէջ ազնիւ կողմնակիցներ կը գտնի։

* * *

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հեռագրում են «Կավկազ»-ին. «Նովոստիին» հաղորդում են Լոնդոնից որ Կ. Պոլսում դեսպանների վեհաժողով կը կայանայ հայկական հարցի վերաբերմամբ։

* * *

«Standard» լրագիրը հաղորդում է, թէ հայկական գործերի եւրոպական քննիչ յանձնաժողովի անդամներն այսուհետև կատարելապէս անկախ պիտի վարեն իրենց գործերը։ Բ. Դուռը գոհացրել է ռուսաց, ֆրանսիացոց և անգլիացոց դեսպանների միջնորդութիւնը, թոյլ տալով որ դելեգատներն իրանց սեփական թարգմաններն ունենան։ Կ. Պոլսոյ ֆրանսիական դեսպանութեան թարգմանն այդ նպատակով արդէն նշանակուած է և ուղևորուել է Մուշ։

* * *

«Daily Telegraph»-ը տպագրել է իր թղթակցի նոր ընդարձակ հեռագրերը Մուշից։ Այդ հեռագրերից առաջինը հաղորդում է տաճիկների գազանական վարմունքների բոլոր մանրամասնութիւնները, իսկ երկրորդը յայտնում է նոր եւրոպական թարգմանի Մուշ հասնելը, որի շնորհիւ քննութեան գործը արագ ընթացք ընթացաւ։

Վկաները բազմաթիւ են—գրում է թղթակիցը—և նրանց ցուցմունքները բոլոր ժամանակ համերաշխ են բոլորովին իմ հաղորդածների հետ, այնպէս որ տաճիկ կառավարութեան ուրիշ ոչինչ չէ մնում, եթէ ոչ խոստովանել որ Սասունի կոտորածն ապացուցուած է և յանձնաժողովի գործունէութիւնը պիտի վերջանայ, որովհետև նա արդէն հասաւ իր նըպատակին։ Հէնց որ ժամանակը ներէ յանձնաժողովը կը գնայ Գելիէգուզան՝ տեսնելու այն չորս հորերը, որ լցրել են սպանուածների դիակներով և Սասունի այրուած գիւղերը։

* * *

«Արձագանք»-ի հետևեալ համարում լոյս կը տեսնեն «The Daily Telegraph»-ի յատուկ թղթակցի ընդարձակ և վերին աստիճանի հետաքրքրելի նամակները Կերասունից և Տրապիզոնից։

* * *

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ Ն.-ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒՄ

—

Կիւրակի, ամսոյս 12-ին, Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցում հանդիսաւոր կերպով կատարուեցաւ հանգուցեալ գերապատիւ Կիւրեղ եպիսկոպոսի հոգեհանգիստը։ Առաւօտեան ժամը 10-ին հնչեց եկեղեցւոյ մեծ զանգը՝ հրաւիրելով ժողովրդեան ս. պատարագի։ Նախիջևանցիք խուռն բազմութեամբ ամեն դասակարգից դիմում էին եկեղեցի իւրեանց սիրած ու պաշտած Կիւրեղ վարդապետի հոգուն համար աղօթելու (Նախիջևանցիներից շատերը դեռ հայր սուրբ են ասում Կիւրեղ Սրբազանին)։

Անգութ հիւանդութեան շնորհիւ ժողովուրդը չարժանացաւ գէթ վերջին անգամ տեսնել իւր հոգևոր հօր երեսը, մինչև անգամ դագաղը՝ (Սրբազանի մարմինը գիշերով տարան ս. Խաչ Վանքը), որ իւրեանց վերջին հրաժեշտը կարողանային տալ։ Ժամը $10^1/_2$ ն էր, որ եկեղեցու զանգը կրկին հնչեց և Վեհափառ Հայրապետը շրջապատուած վարդապետներով իջաւ եկեղեցի. աւետարանից առաջ Վեհափառը բարձրացաւ բեմ և տխուր սըրտով խօսեց հետևեալը.

«Սիրելի ժողովուրդ, կուզէի Ձեզ այսօր խրատ խօսել, սակայն չեմ կարող՝ զի սիրտս վշտաբեկ և միջակտոր եղած եմ մեր սիրելի Տէր Կիւրեղ եպիս. մահուան պատճառաւ, ահ. ուստի այսօր ձեզ մի քանի խօսք կը խօսիմ իմ յիշողութիւններէս Կիւրեղ Սրբազանի մասին։ Այո, վախճանեցաւ Տէր Կիւրեղ եպիսկոպոս և ո՜ւր, իւր սիրելի ժողովրդին մէջ. քանի կը մտածեմ կը զարմանամ, թէ ինչո՞ւ Տէր Կիւրեղ եպիսկոպոս պիտի գար իր սիրեցեալ ժողովրդի մէջ մեռնելու. ուր եօթ տարի ի սուրբ Խաչ Վանք և ի Նոր-Նախիջևան գործեր էր և ժողովուրդ սիրեր էր զնա. այստեղ ալ Աստուծոյ նախախնամութեան մատը կը տեսնեմ։ Վաթսունական թուերուն էր, երբ Տէր Եսայի եպիսկոպոսը պատրիարք նշանակուեցաւ Երուսաղէմ, ես ալ այդ ժամանակ վարդապետ էի, Պոլիս կը գտնուէի։ Պատեհ էր ժամանակ, ուզեցի դէպքէն օգուտ քաղել երթալ Երուսաղէմ։ Մէկ անգամ գացած էի, և այս երկրորդ անգամն էր։ Ահա Տէր Եսայի պատրիարքի հետ ճանապարհ ընկանք երթալու։ Կիւրեղ եպիսկոպոս այն ժամանակ 16—17 տարեկան պատանի այն նաւուն վըրայ կը գտնուէր։ Եսայի պատրիարք 10—15 պատանիներ հաւաքեր հետը կը տանէր։

Երուսաղէմի մէջ աւարտեց իր ուսման ընթացք, կրօնաւոր եղաւ և վարդապետ ձեռնադրուեցաւ։ Ընկերներու հետ ուխտ դրած էր նուիրել իր անձը Մայր Աթոռին, ուստի Ս. Էջմիածին գնաց և այնտեղ 22 տարի ընտիր քարոզիչ եղած է, երբեմնապէս և զանազան պաշտօններ վարած։ Վերջին ժամանակ Երևանայ թեմ. փոխանորդ էր, ուր իր աշխատասէր և խելացի կարգադրութեամբ կը կառավարէր մի մեծ թեմ, ուր 600 եկեղեցի միայն կայ, Տաթևէն մինչև Կալս կը տարածուի։ Ա՜խ, կը վարանիմ այժմ թէ ո՞րուն յանձնեմ այդ թեմ։ Աստուած այսպէս սահմանած էր 1843-ին ծնած 52 տարեկան եկաւ այստեղ հիւանդա-

ՖԵԼԻԵՏՕՆ

ՍԵՒ ՕՐԵՐԻՑ ՄԻՆԸ

—

„Սար ըլէր՝ փուլ կըգար, ծով ըլէր՝ կըցամաքէր, երկաթ ըլէր՝ կըհալւէր"...

Վէրք Հայաստանի։

(Շարունակութիւն) *)

—

Ուղուրլու բէկը նոր զօրականներ ընտրեց, որոնք նշանաւոր էին անգթութեան, վայրագութեան մէջ՝ գնաց պարտապան հայերի գլուխներին կանգնեց հոգէառ հրեշտակի պէս ու պահանջեց փողերը։ Էլ գթալ ու խնայել չկար. հէնց որ մէկն ասում էր՝ չունիմ, իսկոյն ծեծում էին ու մութ նկուղների մէջ փակում կամ կոներից թոկ կապելով, բարձըր տեղից կախելով թակում ոտները, թիկունքը։

Ծեծն ու ջարդը այդպէս շարունակուեց մի քանի օր։ Պարսիկ վերակացուն տեսաւ որ փող չի կանանչւում, ամենն էլ ասում են՝ չունինք, նա պահանջը փոխեց.

—Երբ որ փող չէք ճարում, ուրեմն հաւատներդ ուրացէք։ Եթէ հաւատներդ չէք ուրանում, ինչպէս պայմանի մէջ գրուած է, փողի տեղ ձեր աղջիկն ու տղան վերցրէք, թագաւորին տուէք։

Հայերը մնացին շշմած, ինչպէս լինում են երկու կրակի մէջ ընկածները։ Ոչ ուզում էին հաւատից ու զաւակներից ձեռ քաշել, ոչ էլ սև եղած փողը ունէին, որ տային պրծնէին։

Զօրականները անգորոյն պատուէրները ճշտութեամբ կատարելու մէջ իրարից գերազանցում էին. գազան դարձած՝ ամենին հալածում էին, հոգի չէին թողնում անարատ, անվնաս. տղամարդ ու կինարմատ ջարդելով իրար կոլով էին ածում տներից, բնակարաններից վանդում։

—Մի՞ նստէք. կամ ետ տուէք ստացած փողերը կամ ձեր տղան ու աղջիկը տարէք պալատի դուռը։

Տէր-Բաղդասարը յանդիմանում էր, որ հայ երեխէները իրան չլսելով շահի հետ գործ ունեցան, բայց և յորդորում էր որ չյուսահատուին ու անմիտ քայլ անեն, մինչև որ փողը կը ճարեն, կը տան։ Բայց ծեծն ու նեղութիւնը հայերի մի մասին բոլորովին ընկճել էին հակառակ Բաղդասար երէցի խրատներին. այդ վերջինները վճռել էին զաւակներից ձեռ վերցնել։

—Աւելի լաւ է հարիւր աղջիկ ու տղայից ձեռ լուանանք, քան թէ հազար հոգով հաւատներս ուրանանք։

Այսպէս ասելով պարտապան հայերը բռնեցին իրանց զաւակների ձեռքից, միատեղ ժողովուելով պատրաստուեցին գնալու թագաւորի պալատի դուռը։

Հեշտ է ասել զաւակներից ձեռ վերցնել, բայց սիրտը կըզօրի՞. . .. Գնացողը մէկ չէր, հարիւր չէր. որդետէրն էլ էր գնում, բարեկամն ու ազգականն էլ. Հազարաւոր հոգի՝ մեծ, փոքր, աղջիկ, կնիկ իրար խառնուած՝ ծեր, մանուկ գնում էին լալով, ծնկներին խփելով, գոռգոռալով։ Պալատական պարսիկները խորամանկութեամբ առաջ էին գալիս հարցնում.

—Ա՛յ ժողովուրդ, այդ ինչ բան է, թագաւորի դէմ կռիւ խօ չէ՞ք գալիս, ինչ խաբար է որ ձեզ հետ ընտանիքներ էլ էք բերել։

Նրանց չար միտքը հասկանալով պատասխանում էին տարաբաղդները.

—Ի՞նչ կռուաբան ունինք. կարիք ժամանակ փող վերցրինք, մեր պակասութեանն արինք, յետոյ աշխատանքի պտուղը չունեցանք որ վաստակենք, փոխ առած գումարը ետ տանք։ Ողորմած թագաւորը ինքն էլ է տեսնում որ աղքատ ենք. ինչքան աղաչում ենք, ոչ ժամանակ է տալիս և ոչ բաշխում։ Զօրականների ձեռին փայտ ու միս ենք դառել, տանջուելուց հոգիներս եկել է, բուկներս հասել։ Հիմի լաւ ենք հասկանում, թէ ինչո՞ւ շահը այն գլխից մեր որդկերանց գնահատեց։ Նա լաւ գիտէր որ այս պանդխտութեան մէջ իւր տուած փողը մեր ձեռից կեղտի պէս գնալու է։ Նրա համար պայման դրեց որ փող չունեցած ժամանակ կամ հաւատներս փոխենք կամ մեր որդիքը իրան տանք։

Մենք մեր լոյս հաւատը փոխողը չենք. մեր տանից, տեղից թափառական դառնալով, սովն ու մերկութիւնը ճաշակեցինք, բաւական չէ՞, որ հիմի էլ հաւատներս փոխենք։ Չէ, այդքան տեղն էլ չիմար չենք. ահա մեր աղջիկն ու տըղան բերել ենք իրան դուռը, թող ստանայ ու մեր հոգին ազատ անի, մենք մեր հաւատի անկիւնից յօժարակամ մի փշրանք պոկողը չենք։

Այս ասելուց յետոյ գոռն ու գոչը ձգեցին։ Բաժանուելու ժամը մօտ էր։ Սուգն ու շիւանը, կանանց ծվվոցն ու ճչոցը երկինք էին հասնում։ Ամբողջ քաղաքը թամաշա էր եկել։ Աղջիկը պառաւ մօրից չէր ուզում բաժանուել, որդին ծերունի հօրից. իրար գիրկ ընկած, իրար վզով փաթթուած մղկտում, հեծկլտում էին։ Փողի տեղ գրաւ գնացող աղջիկն ու տղան մէկ իրանց թայ ու թիւշի հետ էին գրկախառնվում, մնաս բարև ասում խեղդուած ձայնով, մէկ իրանց բարեկամների վզով փարւում։ Եղբայր, քոյր, հայր, մայր ձայնն ու ողբը իրարու խառնուած դռռում էին ու արտասուքներով գետինն ողողում։

Նրանց լացն ու կոծը շատ անօրէն պարսիկների սրտերն անգամ շարժեցին։

—Այս զուլումը Աստուած չի վերցնիլ, երկինքը գլխներիս փուլ կ'ածի, ասացին մի քանի մեծամեծներ ու ներկայացան շահին որ խղճայ աղքատ հայերին, տըրւած փողը բաշխի։

Շահը այդ մարդկանց խնդիրքը լսե՛ց, թէ ինքն էլ զգաց որ հայ ժողովրդի լացից քարերն աղաղակում են, դուրս եկաւ տխրադէմ ու հայերի հետ այսպէս խօսեց։

—Թէպէտ պայմանի մէջ գրած է, որ իրաւունք ունիմ ձեր տղէքն ու աղջկերքը պահանջել փողի տեղ, բայց ես էլ հայր եմ, գիտեմ թէ ձեր սիրտն ինչքան կը ցաւի, եթէ զաւակներից զըրկուիք յանկարծակի։ Ես սրտումս գութ ունիմ, երբէք չէի հրամայիլ ձեր զաւակները խլել. այդ բանը վերակացու իշխաններն իրանց ու գլխու են բռնել։ Վերցրէք ձեր զաւակները և ետ տարէք. ես ձեզ փող եմ տուել, փողերս բերէք, ինչի՞ս են պէտք ձեր աղջիկն ու տղան։

Մի քանի հայեր աղերսալիր ձայնով վրայ բերին.

—Շատ լաւ ես հրամայում, ողորմած թագաւոր, բայց փող չունինք, տեղներս նեղ է, բաշխիր, քու ծառաներն ենք, քու ոտի հողն ենք։

Շահը ոչինչ չպատասխանեց, Ուղուրլու-բէկին մի կողմ քաշած վրէն բարկանում էր։

Հէնց այդ միջոցին հայերից պարզամիտները խնդալով ասում էին.

—Աստծուն փա՛ռք, շահի սիրտը գութ գցեց, այսօր աղջիկն ու տղան ետ տուեց, վաղն էլ փողի պարտքը կը բաշխի, Աստուած ողորմած է։

—Չէ, այդքան էլ միամիտ մի լինիք, ասում էին փորձառուները. թագաւորը մեր արևը չի խնդում, զուր էք խաբւում. Երանի այսօր հարիւր աղջիկ ու տղայ վերցնի ու եախաներս թափի։ Նրանց ետ

*) Տես «Արձագանք» № 32.

ցաւ. ես ալ Եզեկիէլի նման ուխտ րրի, որ Աստուած բաշխէ ինձ Կիւրեղ եպիսկոպոսի կեանք ուղարկեմ նորան ուխտ Երուսաղէմ, սակայն Աստուած այլապէս տնօրինած էր. զարկեց առաւ ինձմէ Տէր Կիւրեղ ծրաջան եպիսկոպոս՝ զի ես անբաղդ եմ։ Բաղդը ինձմէ կըլլէ հեռաղհեռէ իմ բոլոր թև ու թիկունք դարձող վարդապետներ։

Երուսաղէմ կը գտնուէի, երբ այնտեղ եկան Վարագէն երկու վարդապետ՝ Հայրիկ այնտեղ կը գտնուի ըսելով, Տէր-Ղևոնդ, որ ձեռագիր այսմաւուրքներէն լիշատակարաններ գրած էր, որոց մէջ շատ ընտիր կըտորներ կան, և Տէր Մեսրոբ որ իմ բացակայութեան ժամանակ կը կառավարէր Վարագայ վանք, աչքիս առաջ էկ միւսի-ետեւէ մեռան և իրարու քով թաղուած են, Պօլսէն ալ լուր մը առի թէ վաղճանած է Տէր-Գարեգին եպ. Սրուանձտեան, որ միակ բանաստեղծ և իր գործ գիտցող եպիսկոպոս էր. այնուհետև եկանք Արաբատեան աշխարհ ուր կը գըտնուէր մեր ծանօթ Վարագի միաբան Գրիգոր եպ. Աղաւնեան, որին Պարսկաստան նշանակեցինք, ան ալ Արաքսի մօտ հին Ջուղայ հասած չը հասած վարակիչ հիւանդութենէ բռնուած մեռաւ։ Տէր Աստուած իմ թև ու թիկունք իրարու ետեէ կ'առնէ, սակայն անոր տեղ Աստուած կըսէ. «Տէր հովեսցէ զժողովուրդ իւր» ես կը լինիմ քեզ օգնական»։ Աւաղ, հազար աւաղ, անանկ հիւանդութենէ բռնուեցաւ Տէր-Կիւրեղ եպիսկոպոս որ չկարողացաւ իր ողջոյն տալ. «Ողջոյն քեզ ժողովուրդ, ողջոյն քեզ Սեղան Սրբութեան.» այլ անշուք կերպով կերթայ Սուրբ Խաչ անդ թաղուելու, ուր երկու բանաստեղծ և Ալամդարեան վարդապետ կան թաղուած. այլ ուրախ եմ անչափ և կը մխիթարուիմ որ Նոր-Նախիջևանցիք փող կը հանգանակեն տապանաքար մը ձգել անոր վրայ։ Ես բանաստեղծութիւն կը գրեմ, այլ տխուր բանաստեղծութիւն աւելի աղէկ կը գրեմ, գիշերս քուն չկրցի ըլլալ, խոր մտածմունքներ քունս խլեցին, գրիչ առի և Տէր-Կիւրեղ Սրբազանի համար մի արձանագիր գրեցի։

Մի պարզ տապանաքար կը ձգէք և վերան այս իմ գրած կը գրէք, իսկ աւելորդ գումար ուրիշ կերպով կը կարգադրեմ որ կենդանի լիշատակ մնայ Կիւրեղ Սրբազանի։ Տէր-Կիւրեղ Սրբազան վաղաժամ մեռաւ, սակայն շատ գործ կատարեց. Նա իր պարտք կատարեց. Աստուած կանչեց անոր. «Եղիր ծառայ բարի և հաւատարիմ... մուտ յուրախութիւն Տեառն»։ Հայաստանեայց եկեղեցու ընտիր մշակ պակասեց, բայց Աստուծոյ քով Հայրիկներ, Կիւրեղներ շատ, պակասածի տեղ ուրիշ մը կը հանէ։ Մենք ալ այսքան կ'ապրինք. կ'երևի դեռ մեր պարտք կատարած չենք լիովին։ Աղօթեցէք, Կիւրեղ եպիսկոպոսի հոգւոյն համար աղօթեցէք և Հայրիկի համար որ մի քանի տարի ալ ապրենք, մեր պարտք կատարենք, Աստուած աւելի-էն աւելի կը պահանջէ։ Տէր Աստուած, Հայաստանեայց եկեղեցւոյն մշակներ տուր. Ամէն»։

Պատարագից յետոյ կատարուեց հոգեհանգստեան կարգը ժամանակցութեամբ Վեհափառ Հայրապետի, որ ինքն ևս իւր գողգոջիւն ձայնով երգում էր շարականը։ Ժողովուրդը սաստիկ զգացուած էր։ Մահուանից անմիջապէս յետոյ սկսուեց հանգանակութիւն մահարձան կանգնելու և նորա լիշատակը յաւերացնելու նըպատակաւ։

Վեհափառ Հայրապետը երեկ ուղարկեց Երուսաղէմ 100 ռուբլի փող Սրբազանի հոգուն պատարագ մատուցանելու համար։

Ակնատես։

Մարտի 12
Ն.-Նախիջևան։

* * *

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Կիւրակի, մարտի 14-ին, Կիւրեղ եպիսկոպոս Սրապեանի հոգեհանգիստն էր։ Եկեղեցին և դուրսը լիքն էր խուռն բազմութեամբ։ Երևանի ամբողջ հասարակութիւնը եկել էր իւր խորին վիշտը յայտնելու այն մեծ կորստի համար, որ մեր թեմը կրեց յանձին ի Տէր հանգուցեալ Կիւրեղ սրբազանի։ Հոգեհանգստին ներկայ էր և թեմիս կառավարչի ժամանակաւոր պաշտօնակատար Անանիա սրբազանը, որ չնայելով հասարակութեան այնքան թախանձանքներին, արգելեց դպրանոցի ուսուցիչ պ. Ն. Տէր-Կարապետեանին՝ կարդալ իւր պատրաստած դամբանականը։ Սրբազանը իւր այդ վարմունքով հասարակութեան արդար պայրոյթը միայն գըրգռեց»։

Ի՞նչպէս հաշտեցնենք սրբազան Անանիայի այդ վարմունքը նրա հեռագրի հետ, որ կը տպագրուի «Արձագանքի» հետևեալ համարում։

* * *

Վերջին ժամանակներս Կովկասի ուսումնարանական շրջանում [illegible] գպրոցները. Քութայիսի նահանգում.—Բախվայի, Բասիրէտի, Միքէլ-Գաբրիէլի, Զիբատի, Դվօրբէտի, Ակէտի, Դիդի-Ջիխայիշի, Սվիրի, Ցալինջիխի, Սուջունի, Նաօզալեվի և Միրոնի տարրական հասարակական դպրոցները փոխակերպուած են ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան երկդասարանեան դպրոցների. Ջնակուի և Բօդբեյսկի տարրական դպրոցները միացել են և կազմել երկդասարանեան դպրոց. Կվալօնի և Խարագուլի միադասեան դպրոցները բարեփոխուած են երկդասեանի ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան իրաւասութեան տակ, եայլն։

Այս լուրը որ Պետերբուրգ. և Մոսկուա հասնի, անպատճառ «Նով. Վրեմ.» և «Մոսկ. Վեդոմօստի»-ն այդ դպրոցներն էլ կը վերագրեն հայերին և կառաջարկեն փակել նրանց։

* * *

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հեռագրում են, որ ներքին գործերի նախարարը թոյլ է տուել ազնուական Գիգօրիյ Պալմին ա մ ե ն օ ր ե ա յ թ ե ր թ հրատարակել Բ ա թ ո ւ մ ո ւ մ. Թերթը պիտի ընդարձակ Կովկասեան բաժին ունենայ և պիտի անուանուի «Չեռնօմօրսկիյ Վեստնիկ»։ Ծրագիրը նոյնն է, ինչ որ և մայրաքաղաքի գրական-քաղաքական թերթերինը։

* * *

ՀԱՅԻ ԿՈՉԻՆ ԵՒ ՍՈՒՎՈՐԻՆԻ ԱՏԱՄՆԵՐԸ

—

Յայտնի Սուվորինի՝ յայտնի «Նովոյէ Վրէմիա»ն Թիֆլիզի քաղաքային դըպրոցների և Թիֆլիզի հայերի ոտից բռնել է և բաց չէ թողնում։ Հանգուցեալ Պօղ. Իզմայլեանի նամակը այնպիսի մի բարոյական հարուած է տուել այդ լրագրին, որ նա ոչ մի կերպ չէ կարողանում մարսել, և ոչ մի օրինական և բարոյական հիմք չկարողանալով բերել իր ցանկութիւնը օրէնք հրատարակելու համար, Սուվորինը դիմում է շօվինստների սուվորական ստոր միջոցներին, որոնցից գլխաւորն է գրգռել իր ազգի անձնասիրութիւնը Կովկասեան ազգերի, և մանաւանդ հայերի դէմ։ Ուշադրութիւն չդարձնելով ո՛չ Թիֆլիզի քաղաքային դպրոցներին վերաբերեալ պաշտօնական հաշիւներին, ո՛չ պաշտօնական տեղեկութիւններին, որոնք վկայում են թէ Թիֆլիզի քաղաքային դպրոցները հայկական չեն, նա շարունակ աղաղակում է, թէ «Թիֆլիզի հայերը ռուսաց տէրութիւնից թոյլտուութիւն են պահանջում որ իրենք կրթեն Կովկասը։» Իբրև նմուշ գրական բարքերի և հրապարակախօսական արժանաւորութեան անկման այստեղ առաջ ենք բերում «Նով. Վր.» 6838 համարի մէջ այդ առթիւ տպուած յօդուածը, որից նոյն իսկ սև թանաքը կարմրում է, բայց որ զարդարում է «Նով. Վրեմ.» էջերը։ Յօդուածի վերնագիրն է «Մէ հակառակ գալ չարին» և այդ արդէն բաւական բնորոշում է Սուվորինի ոստիկանական հրապարակախօսութիւնը։

«Կրկին անգամ վերադառնում ենք—ասում է «Նով. Վրեմ.—Թիֆլիզի բանակռիւներին՝ դպրոցական գործի մասին։ Այդ բանակռիւների էութիւնը հազիւ թէ մէկի համար պարզ չլինի։ Ամբողջ գործը չափազանց պարզ է։ Թիֆլիզում հայերը իրենց ձեռքն են ձգել տեղական գործերը, հայ [illegible] են քաղաքի հայրերը, տեղական ինքնավարութեան կառավարիչները, և դա երկու պատճառ ունի. Նախ՝ որովհետև Թիֆլիզում բոլոր առևտուրը հայերի ձեռին է, ինչպէս Օդեսայում հրէաների, և երկրորդ՝ որովհետև ոչ ոք նրանց չի [illegible] քաղաքի վարչութիւնն իրենց ձեռքը ձգել, այսինքն, [illegible]։ Բայց հայերը Թիֆլիզի կառավարութիւնը զաւթելով կամեցան օգուտ քաղել իրենց [illegible] և ծառայեցնել նրան իրենց [illegible]։ Եւ ակնյայտնի է որ սկզբում ո՛չ մի կողմից ո՛չ մի արգելքների չհանդիպեցին իրենց այդ ցանկութիւնը կատարելու համար։ Հայկական տիրապետութիւնը Թիֆլիզի քաղաքային գործերի մէջ շատ շուտով արտայայտուեց և Թիֆլիզի քաղաքային դպրոցների ուղղութեան մէջ, որոնք դարձան հայկական (!) դպրոցներ, այսինքն այնպիսի զէնքեր, որոնք պիտի ծառայեն բոլոր Թիֆլիզի բընակիչներին հայացնելու համար...»։

Մարդ չգիտէ ծիծաղէ թէ զարմանայ այդ խելացնոր խօսքերի վրայ։ Բայց դրանք մասամբ կրթիչ են հայերի համար, մանաւանդ այն հայերի, որոնք մինչև այսօր իրենց լեզուն անգամ չգիտեն, իսկ նրանց վերագրվում է թէ նրանք ամբողջ Թիֆլիզի բնակիչներին, այսինքն ռուսներին, վրացիներին, թուրքերին, ասորիներին, ֆրանսիացիներին, գերմանացիներին «ցանկանում են հայացնել»...

Ս. Հ.

* * *

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԵՆ ՎԱՐՎՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՑԻՔ ՀՆԴԻԿՆԵՐԻ ՀԵՏ

—

Ամերիկական «Forum» ամսագրում տպագրուած է Պօուէլի շատ հետաքըրքրական յօդուածը, որ ծանօթացնում է Հիւսիսային Ամերիկայի հնդկական ցեղերի այժմեան վիճակի հետ։ Այդ յօդուածը ցոյց է տալիս, թէ ինչպէս ամերիկական քաղաքակրթութիւնը բուն մարդասիրական տեսակէտից լուսաւորութիւն է մտցնում այդ ցեղերի մէջ՝ մտածելով միայն նրանց բարօրութեան մասին և առանց որ և է փորձ անելու ճնշելու նըրանց ցեղական իրաւունքները։ «Forum»-ը երկար և մանրամասն ուսումնասիրութիւնից յետոյ պնդում է որ ինքը տեսել է հազարաւոր վայրենի հնդիկներ, որոնք վայրենութեան վիճակից բոլորովին կրթուել են և քաղաքակրթեալ կեանք են վարում։ Հազարաւոր վայրենիներ փոխել են իրենց առաջուան «ազգային» զգեստը և հագնում են համեստ եւրոպական զգեստ, խօսում են եւրոպական լեզուներով։ Հողային խնդրում ամերիկացիք հնդիկների հետ վարվում են հետևեալ կերպով. միշտ գնելով նրանց անմշակ հողը, նրանք առատ գումարներ են վճարում նրանց և միևնոյն ժամանակ այդ հողերի մեծ մասը թողնում են հընդիկներին և հաստատում են նրանց վրայ, որպէս զի նրանք առանց հողի չմնան։ Այդ հողերի գները հետզհետէ բարձրանում են և առատ հարստութեան աղբիւր են դառնում հնդիկների համար։ Ամերիկացիք այդ ցեղերի մէջ քաղաքակրթութիւն են տարածում՝ արուեստանոցներ և դպրոցներ հիմնելով, որ նրանց վրայ մեծ ծախք է նստում։

Շատ հետաքրքրական է հնդիկների համար հիմնած դպրոցների պատմութիւնը։ Սկզբում ամերիկացիք բացին նրանց համար դպրոցներ, առանց ի նկատի առնելու նրանց բազմաթիւ ցեղերը և լեզուները։ Այդ դպրոցները ոչ մի օգուտ չկարողացան տալ, այն ժամանակ ամերիկացիք ստիպուած եղան և անհրաժեշտ համարեցին նոյն իսկ Աստուածաշունչը թարգմանել տեղական լեզուներով և գիտութիւնը հաղորդել հնդիկներին իրենց մայրենի բարբառներով, որոնց թիւը շատ և շատ է։

Այդ մարդասիրական բուն քաղաքակրթական սիստեմն այն հետևանքն ունեցաւ, որ վայրենի հնդիկները շուտով կրթուելով և ուսումն առնելով, սկսան շփուել քաղաքակրթուած աշխարհի հետ և դառնալով ամերիկական քաղաքացիներ առատ զարկ տուին երկրի արդիւնաբերութեան և յառաջադիմութեան՝ աշխատելով յօգուտ իրենց հայրենիքի։»

* * *

«Պրավիտելստ. Վեստն.» հաղորդում է, որ 1896 թուականի ընդհանուր ռուսական ցուցահանդէսի կարգադրիչ յանձնաժողովը վճռել է հանել Կովկասից ուղարկուած առարկաները առանձին յատուկ Կ ո վ կ ա ս ե ա ն բ ա ժ ն ի ց և ի ցոյց դնել ընդհանուր բաժանմունքներում։ Այդպիսով Կովկասը ցուցահանդէսին չի ունենալ իր առանձին բաժինը...

* * *

Քաղաքային խորհուրդը իր ամսոյս 20-ի նիստում որոշեց Թ ի ֆ լ ի զ ի ք ա ղ ա ք ա գ լ խ ի ը ն տ ր ո ւ թ ի ւ ն ը նշանակել ապրիլի 24-ին։

* * *

Կիւրակէ, փետր. 19 ին, Թիֆլիզի դատարանական շրջանի երդուեալ հաւատարմատարների ժողովում վճռուեց միջնորդել որ թոյլ տրուի Կովկասում հաստատել երդուեալ հաւատարմատարների խորհուրդ պետութեան մէջ ընդունուած ընդհանուր կանոնների համաձայն։

* * *

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հեռագրում են «Կավկազ» լրագրին, իբր թէ ելևմտից նախարարի կարգադրութեամբ այս տարի Կովկասում [illegible] հողային հարցը։ Այդ հեռագիրն արտատպելով «Նով. Օբօզր.» լրագիրը շատ արդարացի նկատում է, թէ այդ լուրը չէ կարող ճիշտ լինել, որովհետև մեր երկրում այժմ հողային իրաւունքները և հողերի սահմանները դեռ չեն որոշուած։

* * *

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. — Կիւրակի մարտի 12-ին տեղական հայոց եկեղեցում ժողովուած էր հայ կօլոնիան՝ լսելու Վեհափառ Հայրապետի հրամանով նոր նշանակուած Տիրայր վարդապետի առաջին քարոզը։ Արժանապատիւ Հայրը հաղորդեց ժողովրդին Հայրիկի սիրալի ողջիւնը և մի ազդու քարոզ խօսեց, որ ներկայ ժողովրդի վրայ լաւ տըպաւորութիւն թողեց։

* * *

Խմբագրութիւնս ստացաւ «Թատրոն» հանդէսի հրատարակութեամբ լոյս տեսած «Մ ա ր ի ա Ս տ ի ւ ա ր դ» ողբերգութիւն հինգ գործողութեամբ, հեղինակութիւն Շիլլերի, թ ա ր գ մ ա ն ո ւ թ ի ւ ն Գ է ո ր գ Բ ա ր խ ո ւ դ ա ր ե ա ն ի։ Գիրքը տպագըրուած է շատ մաքուր և պատկերազարդ է։ Պ. Գէորգ Բարխուդարեանի անունն արդէն գրաւական է որ թարգմանութեան լեզուն գեղեցիկ է։ Գինն է 50 կոպէկ։

* * *

Մարտի 16-ին Թիֆլիզի [illegible] աւարտման վկայականներ տուեց ութերորդ շրջանի աւարտող հետևեալ աշակերտուհիներին.—Արեշեան Ա., Վարաժեան Եսթեր, Դաւթեան Մարիամ, Ղալամքարեան Մարիամ, Ռոտինեան Աննա, Ռօզէնֆէլդ Մարիա, Տէր-Սարգսեան Վարվառէ, Դաւիդովա Օլգա, Խանայեան Եղիսաբէթ, Խարազեան Թամար, Խեչումեան Եղիսաբէթ և Չելեաէվա Կսէնիա։ Շուտով կը բացուի 9-րդ դասընթացը։

* * *

Թագաւոր կայսրը բարեհաճել է սոյն փետրվարի 14-ին թոյլատրել բժշկապետ պ. Տ է ր-Զ ա ն ե ա ն ց ի ն ընդունել և կրել իրեն շնորհուած «Officier de l'instruction publique» կոչուած շքանշանը։

* * *

Թագաւոր կայսրը բարեհաճել է թոյլատրել սինոդի անդամ գ ե ր ա պ ա տ ի ւ Ա ր ի ս տ ա կ է ս ե պ ի ս կ ո պ ո ս Ս ե դ ր ա կ ե ա ն ի ն ընդունել օսմանեան կայսրութեան վեհապետ Սուլթան Աբդիւլ-Համիդի շնորհած Մէջիդիէ շքանշանի երկրորդ աստիճանի աստղը և կրել կրծքի վրայ։

* * *

Երէկ վախճանուեց Թիֆլիզի ս. Գէորգ եկեղեցու աւագ քահանայ արժանապատիւ Հայր Գնունին։

* * *

Յիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ այսօր արքունական թատրոնում կըկայանայ հայազգի երիտասարդ պ. Ն. Թ. Տիգրանեանի կոնցերտը։ Այդ կոնցերտին գեղարուեստագէտը պիտի նուագէ յատկապէս իր ձայնագրած մի քանի ասիական եղանակներ։

Ա Զ Դ

Խմբագրութիւնս խնդրում է „Արձագանքի“ բաժանորդներին որ հասցէն փոխելու դէպքում անպատճառ յայտնեն իրենց առաջուան հասցէն և միևնոյն ժամանակ ուղարկեն նոր հասցէի տպագրութեան համար 50 կոպէկի փոստային մարկա. հակառակ դէպքում բոլոր գրուած նամակները կըմընան առանց ուշադրութեան։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԵՐԱՍՈՆ, փետր. 25.

(Թղթակցութիւն "Արձագանքի")

—

Կերասոն լինելով մի նաւահանգիստ, տարիներու ընթացքում շատ անցքերի ու դէպքերի ականատես է եղեր. Իւր վրայօք են անցեր դէպի հեռաւոր վայրեր թէ հայրենեաց անձնուէր սարագիր-բանտարկեալը և թէ նոյն իսկ գող աւազակը, ուրիշի աշխատանքով ու քրտինքով կերակրուող մաշապարտը։

Դեռ ոչ մի տարի, որքան ես կը յիշեմ, Կերասոնը տասնեակ խմբովին անմեղ հայ աքսորեալներին այսքան գըժբաղդ ականատես չի եղած, որքան այս վերջին աղմկալի տարիներու ընթացքում, որքան մանաւանդ այս վերջին շաբթուս և այս օրերիս։

Այսօր օր չկայ, գիշեր չկայ որ մի-մի խումբ շղթայուած հայ բանտարկեալ աքսորականներ չբերուեն քաղաք և չանցկացնուին դէպի հեռու աքսորավայրերը։ Այդ խմբերը, որքան վերահասու եղանք, կը պատկանին Վանի, Բաղէշի, Մուշի, Կարնոյ վիլայէթի հայ ազգաբնակութեան։

Հետաքրքիր է իմանալ թէ արդեօք այսքան հայեր՝ որ աքսորի են դատապարտուած, որքան ևս դեռ կըմնայ այդ վիլայէթութեանց կենդրոնական բանտերում։ Եւ արդեօք, դարձեալ մի այլ հարց՝ ինչո՞ւ այդ տասնեակ ողորմելիների աքսորը փութացուց միայն այն ժամանակ, երբ եւրոպական Քննիչ Կոմիսիան որո-

---

տալու նպատակն այն է, որ մենակ նըրանց հաւատափոխ չանեն, այլ մեզ՝ բոլորիս, այսքան հազար հոգուս։

Այս վերջին կարծիքը ճիշտ էր։ Ձահը բարկանալով Ուղուրլու բէկին ասում էր.

—Կարճամիտ մարդ, ո՞ւր ես բերել այս մի քանի աղջիկ ու տղաներին. ինչ օգուտ դրանցից։ Ես մտադիր եմ դրանց տակով, արմատով մեր կրօնին դարձնել, որ երկու երեք տարուց յետոյ հայի հոտը չլինի իմ հողի վրայ։

Յետոյ ցուրտ երեսով դառնալով դէպի ժողովուրդը ասեց.

—Լաւ էք յիշում, թէ պայմանաթըղթում ինչ է գրած, կրկնելն աւելորդ է։ Եթէ կարճ ժամանակում ինձնից փոխ վերցրած գումարը կը բերէք, լաւ, ազատ կը մնաք ձեր կրօնին. եթէ չէք վճարել, այն ժամանակ բոլորդ մեծ ու պստիկ պէտք է ձեր հաւատը թողնէք և Մահմեդի սուրբ օրէնքն ընդունէք։ Այդպէս խելօք բան որ անէք, ոչ թէ ձեր բոլոր պարտքը կը բաշխուի, այլ և ամենքիդ առանձին առանձին պարգևներ կը տըրուին, Լսեցիք։ Դէ հիմա գնացէք, մինչև մի շաբաթը կամ փողը պատրաստեցէք, կամ մոլար հաւատներդ թողէք, մեր ուղիղ կրօնն ընդունեցէք։

Հայ ժողովուրդը՝ մտամոլոր արեան ծովն ընկածի պէս ետ դառաւ պալատի դռնից։ Ձահը Ուղուրլու բէկի վրայ ունքերը հուպ տալով պատուիրեց.

—Կրնկակոխ կը գնաս ետևներից, մի րոպէն ի՞նչ է, մի րոպէ հանգստութիւն չես տալ, գետնի միջից է, երկնքի երեսից է, որտեղից կը լինի կամ փողը ճարել կը տաս կամ հաւատները փոխել կը տաս։

Սրտնեղած, աղքատ հայերն այնքան չէին հանգստացել իրանց օթևաններում, որ գոնէ մի բաժակ ցուրտ ջուր խմեն, մէկ էլ տեսան արևնխում յօրականները խումբ-խումբ երևացին թաղամէջերում։

Ամենից շատ քամբաղ էր նա, ով կամ սիրուն աղջիկ ունէր կամ գեղեցիկ կին. Նրա երկու ոտը դնում էին մի շըկէֆ-ի (կոճղպար) ու ստիպում, որ կամ փողը ճարի կամ կնիկն ու աղջիկը իրանց կամքին թողնի։ Ֆարաշների անպատկառ առաջարկները ամեն տեղ մերժւում էին։

Ֆարաշներն էլ ամենին՝ թէ մեծի թէ փոքրի անխտիր տներից դուրս էին անում փողոցներն ածում, դռները փակտում, բանալիներն իրանց գրպանը դնում։ Հարիւրաւոր ընտանիքներ թև էին գալիս փողոցէ փողոց փող ճարելու համար։ Ծանուկ ահ ու սարսափ էր տարածած, որ ով հայերին փող տայ, պէտք է նրա ստացուածքը յարքունիս գրաւուի։ Լրտեսները հետևում էին որ իմանան, թէ ինչ հայեր են ձեռք մեկնում, շուտ տեղեկացնեն շահին։

Այդ պատճառով ոչ մի Երևանցի կամ Ջուղայեցի հայ սիրտ չէր անում Ղարաբաղ մելիքի և Ղըլը-եալան մելիքի ժողովրդին փողով կամ խորհրդով օգնելու, այնպէս պաշարուած էին լրտեսներով։ Խեղճերը տեսնում էին թէ ինչպէս իրանց համազգիներին ծեծում են կնոջ, քրոջ աչքի առաջ, քարշ են տալիս, կախում են գլխի վայր ոչխարի պէս։ Մնում էին հեռուից նայելիս և կարեկվեր սրտով ցաւելիս։

Պարտապան աղքատ հայերը գիշեր ցերեկ թափառում էին փողոցներում, կանայք, աղջիկերք, մարդիկ, տղերք ուտում էին փողոցում, նըղում, քնում էին փողոցում։ Այս բոլոր դառնութիւնները քաշելով երբէք մտքներով չէին անցկացնում թողնել իրանց կրօնն ու հաւատը, այլ ում տեսնում էին՝ հայի թէ օտարազգի, այն էին պաղատում, որ ձեռ բռնեն իրանց, ինչ տոկոսով ուզում են, փող տան Շահ-Աբասի պարտքը վճարելու, որ կրօնափոխութեան վտանգից պրծնեն։

Թշնամիս չընկնի անօրէնի ճանկը։ Երբ տիրողը բռնաւոր է, հպատակի օրը նզովածի՝ լինի գիւղացի, թէ ազնուական, լինի ստորին պաշտօնեայ թէ հոգևոր տէր։ Մարգարիտը խոզի աչքում ինչ գին ունի։

Դեռ հայոց 1034 թ. Ս. Էջմիածնի գահի վրայ բազմած էր Առաքել կաթողիկոսը, բայց այնքան դառն և անտանելի էին ժամանակները, այնքան բարբարոսաբար էին նեղացնում օսմանցոց մեծամեծներն ու բդեշխները, որ նա երկու տարին չլրացրած իւր տեղը կաթողիկոս էր ձեռնադրել Դաւթին, տառապանքներից յոգնած մի վանք քաշուել և մնացել մինչև մահը։

Նշանաւոր թէ աննշան հայեր, գիւղապետներ թէ մելիքներ, բոլորն էլ օսմանցոց բռնութիւնից փախել էին։ Միակ ապահով անկիւն գտել էին Պարսկաստանը։ Բայց կաթողիկոսն ո՞ւր փախչէր բիւր նեղութիւնների ձեռից։ Հարկապահանջները դադար չէին տալիս, ամեն ցաւի համար աթոռի եախիցն էին կպչում։

Դաւիթ կաթողիկոսը հարկադրուած շրջում էր կեղեքուած ժողովրդի մէջ, փող հաւաքում և օսմանցոց պաշտօնեաներին տալիս։ Մէկ, հինգ կրկնելուց յետոյ կաթողիկոսը տեսաւ որ ժողովրդի մէջ ույժ չըկայ, հարկապահանջների ձեռից փախաւ անծանօթ տեղեր, ամիսներով մնաց. բայց նկատելով որ աթոռի վիճակը չի բարւոքւում, հարկերը դիզւում են, ինքն էլ փախուստ տուած է ապրում իւր աթոռից, վեց տարի միայնակ չարչարուելուց յետոյ որոշեց եպիսկոպոսներից մէկին իրան օգնական շինել, կաթողիկոսի հաւասար իրաւունքներ տալ, որ պարտքեր վճարելու մէջ աջակցի։

Այդ դեռ 1042 թ. էր և այդ օգնականն ընտրուեց Մելքիսեթը։ Սա աչքի ընկնող արժանաւորութիւն չունենալով չկարողացաւ այնքան գումար ժողովել, որ աթոռի հարկերը վճարի։

Աթոռի եկամուտը միաբաններին հազիւ էր բաւականացնում։

Աթոռի անունով պարտքեր էին անում և այդ պարտքը տոկոսների հետ հասել էր չիսուն հազար դահեկանի։

Պարտատէրերը մի կողմից էին նեղացնում, հարկահանները միւս կողմից. Դրանց ձեռքից գլուխ թափելու համար կաթողիկոսները այսու այն կողմն էին քաշւում և գաղտնած մնում։ Երեք օրն ինչ է, երեք օր չէին կարողանում դադար առնել. պարտատէրերից ու հարկահաններից ահ և ամօթ քաշելու պատճառով գիշերներն էին պտըտւում։ Մելքիսեթը գնացել էր Կ.Պոլիս այնտեղի հայերի մէջ ժողովք անելու։ Մեծատուները խնդրել էին որ իրանց պատրիարք լինի, կաթողիկոսութիւնից հրաժարուի, աթոռից երկուութիւնը վերանայ, ժողովուրդը մի հոգևոր տէր ճանաչի։ Գլուխ չէր եկել այդ պայմանը։ Մի տարուց յետոյ վերադարձել էր Ս. Էջմիածին և ընկել պարտատէրերի ձեռքը։

Դաւիթը աթոռից փախած էր, Մելիքսէթն էլ իմանալով նրա տեղը փախաւ է նրա մօտ, երկուսով ծածուկ ապրեցին։

Բաւական չէին խեղճ ժողովրդին սրածութիւնն ու հարստահարութիւնը, սովն էլ վրայ հասաւ։

Սաստիկ երաշտից ցանքերը չորացան անօթութիւնից սովամահ եղան անթիւ մարդիկ, ցորենի գոռը (27 գրվ.) ութ դահեկանով հազիւ էր ճարւում։ Բարձր Հայքը՝ Կարինից Երզնկա, Վասպուրականից Արարատ և Սիւնիք սովըն էր իւր թևերը փռած։

Սովը հերիք չէր կարծես, մահտարաժամն էլ լոյս ընկաւ ժողովրդի մէջ։ Ինչ որ սովից ազատուել էր, սրան կուլ գնաց։

Քաջբերունի Ս.

(Կը շարունակուի)

շուեց և եկաւ ու անցաւ դէպի արևմտեանց և աւերակատեղ Հայաստան.. Գուցէ, բնական ենթադրութեամբ, լոկ նրա համար, որ երբ Քննիչ Կօմմիսիան սկսալու է մի քննական ակնարկ ձգէ Տաճկաստանի բանտերի մէջ, չտեսնէ այնտեղ միմեանց վրայ թափթփած տասնեակ անմեղօրէն տանջանքի դատապարտուած հայեր՝ թէ հոգևորական դասակարգին պատկանող և թէ աշխարհական։

Որքան Հայաստանի խորքերից հայ շղթայակապ խումբերը օր օրուայ վրայ դուրս կը քշուեն իրանց մայրենի աշխարհից՝ դէպի դատապարտութեան անծանօթ անկիւնները, միւս կողմից նոյնքան և աւելի քաղաքիս նաւահանգիստով դէպի հայաստանի խորքեր կը տեղափոխուին Ռումինիայի ու Բուլղարիայի հողից վռնդուած մահմեդականների անթիւ ջոլորներ։

Եւ զարմանալի չլինի ասել, որ Կերասոնի առևտուրը համարեա դոցանով կը շարժուի։ Ցայտնի նաւահանգիստ այդ քաղաքը այդպիսի գժբախտներով միայն կըսկսի կենդանանալ, շարժուիլ։

Կերասոնի այս տարուայ բերքն ու արտաբերութիւն շատ սակաւ էր, ժողովուրդը կարող էր սովի անգամ ենթարկուիլ, եթէ Մարսէլիայից, այլ և Ռուսաստանից հացահատիկներով ու ալիւրով ծանրաբեռնուած գաղղիական շոգենաւներ ամեն շաբաթ և համարեա ամեն օր չգան ու չմտնեն Կերասոն։ Իւրաքանչիւր շոգենաւ իւր ամեն մի գալուն, իւր հետ կը բերէ մօտաւորապէս 500 - 700 պարկ (մեշոք) ալիւր կամ հացահատիկ։ Եւ արտասահմանից այդ փոխադրուած ուտեստը կազատէ այսօր ժողովուրդը սովի չարիքից։

Հայ ժողովրդի և մահմեդական մոլի տարրի յարաբերութիւնը խիստ լարուած է դէպի միմեանց։ Եւրոպական Կօմմիսիայի գոյութեան օրից մինչև ցարդ հայերու համարձակ շարժուելն անգամ վըտանգաւոր գուշակութիւնների տեղիք կուտայ։ Չխօսելով ֆանատիկոս մօլլաների ընդդէմ քրիստոնէից ամենօրեայ գրգռիչ քարոզների ու նկատողութիւնների մասին, այս պիտի ասել, որ թիւրք կանայքն ևս իրանց կրօնով ու ազգով տարբեր սեռի վրայ ահ ու սարսափ ազդելու համար իւրաքանչիւր նորոգուող օրուայ հետ սարսափելի լուրեր կը տարածեն քրիստոնեայ կանանց շրջաններում։ Նոքա մեծամեծ սպառնալիքներով կը յոխորտան ասելով, թէ մեր ամուսինների ու շէյխերի մէջ արդէն մարմնացած խորհուրդ կայ, որ Ռամազանի աւուր կամ ձեր Մեծ Զատկի տօնի մէջ բոլոր քրիստոնէից սրակոտոր անել, ջարդել ու փշուր փշուր դարձնել և այլն և այլն սորա նման սարսիչ սպառնալիքներ։

Տեղային իշխանութիւնը, որ կը ղեկավարուի կայմակամութեամբ, վերջին աստիճանի թոյլ և անտարբեր է դէպի այսօրուայ աճող ու մեծացող սպառնական երևոյթներ։

Կերասոնի բնակչութիւնը դեռ իւր կեանքի ընթացքում համարեա չի տեսած մի ազգով առնավուտ թիւրք իշխանաւոր, որպիսին է ներկայ կայմակամը, որ այդ աստիճան թոյլ և երկչոտ լինի։ Շնորհիւ կառավարչի այդ պախարակելի ընթացքին այսօր իշխանութեան ու ժողովրդային գործերը մատնուած են մի կարգ տեղային պաշտօնեաների վնասակար կամայականութեանց ու քմաց...։

Քաղաքի մէջ աւազակութիւնք օրուայ կարգն են անցած։ Գիշեր չկայ որ մի տուն չկողոպտուի, ընտանիքներ չթալանուեն, մարդիկ չվիրաւորուեն։ Զարմանալի է արդարև մեր աշխարհում, մանաւանդ մեր քաղաքում «աւազակային» արհեստի այսքան ծաղկում ու յառաջադիմութիւնը։ Երևակայեցէք որ երրորդ ու չորրորդ յարկանի տները ընդմիշտ կը կողոպտուեն առանց մի ներքնայարկի դուռը խորտակուելու, պատուհան փշրուելու որմեր քանդուելու։ Աւազակների այդ զարգացած ճարպիկութիւնը կը գործադրուի չիվինների ու բուրղուն երկաթեայ գործիքներով, որոնցից վերջինով, այն է բուրղունով կը ծակեն աղիւսաշէն ու քարաշէն որմեր և առաջինը, այն է չիվիններ շարուելով բուրղունով բացուած այդ ծակոտիքների մէջ, կը կազմեն շինութեան բարձրութեամբ մի աստիճան և այդպէս կը կատարեն իրանց աւազակութիւններ։ Հապա կրցէ՞ք, թէ Տաճկաստանի մէջ ոչ մի արհեստ ոչ ծաղկած է և ոչ ևս յառաջադիմած...

Օշ.

ԸՆԴԻՄԽՕՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Պ. Խմբագիր.

Ցանուն արդարութեան խնդրում եմ գետեղել իմ այս երկտողը Ձեր լրագրի առաջիկայ համարներից մէկում։

«Արձագանքի» մարտի 1 ի 24-րդ համարում լոյս տեսաւ հետևեալ լուրը. «Տեղոյս Ցերունի քահանայ Հայր Աւշաբեանցը հրաւունք է ստացել պատշաճաւոր իշխանութիւնից թողնելու ընդ միշտ իւր պաշտօնը զառամութեան պատճառաւ։»

Պարտաւորութիւն եմ համարում «Արձագանքիդ» միջոցաւ յայտնել, որ նախ՝ ես երբէք ոչ մի իրաւունք չեմ ստացել պատշաճաւոր իշխանութիւնից իմ պաշտօնս թողնելու համար, և երկրորդ՝ զառամեալ հասակին ես դեռ չեմ հասել, ինչպէս նկատում է կոյր լրատուն։ Երևի նա չէ կարողացել գէթ մի հասարակ խօսքի նշանակութիւնը հասկանալ, որ չխտահանար զառամեալ անուն տալ ինձ, որովհետև իմ բոլոր պաշտօնավարութեան միջոցում թէ հոգևոր իշխանութիւնը և թէ Ղուբայ քաղաքի բազմաթիւ անձինք քաջ ճանաչելով ինձ՝ ցարդ ի նոցանէ ոչ ոք չէ նկատել զառամութեան նշոյլ ինչ իմ վերայ, որպէս վկայում է պ. լրատուն։

Առաք. քահանայ Աւշարեանց։

14 մարտ 1895 թ.
Ղուբա։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՃԱՓՈՆԻԱ.— Նոր տեղեկութիւններին նայելով՝ ճափոնացոց պատերազմական եռանդը հետզհետէ աւելի և աւելի է բորբոքվում։ Մանաւանդ եռանդ են ցոյց տալիս քրիստոնեայ ճափոնացիները։ Առաջին զինուորը որ մտել է Կօրէ Եալի գետով — քրիստոնեայ է։ Չնայելով որ թշնամին գետի միւս ափումն էր, նա համարձակ լողաց և ոտը դրաւ Կօրէայի հողի վրայ, իսկ հետ լողալուս նրան սպանեց թշնամու գնդակը։ Քրիստոնեայ ճափոնացի քահանաները քարոզներ են խօսում անխտիր, թէ քրիստոնեայ և թէ հեթանոս ճափոնացիներին և գրգռում են նրանց հայրենասիրութիւնը։ Թափորները կատարվում են հրապարակաւ, իսկ ճառախօսութիւնները կատարվում են թէ հրապարակներում և թէ մեծ դահլիճներում։

ՄԱԿԵԴՈՆԻԱ.— Մակեդոնիայի խընդիրը հետզհետէ աւելի և աւելի սուր կերպարանք է ստանում։ Բ. Դուռը մի քանի անգամ բացատրութիւն է պահանջել Կ. Պօլսոյ Բուլղարական գործակալից Մակեդոնիայում տեղի ունեցած շարժումների մասին, բայց Բուլղարիան ուշադրութիւն չի դարձնում այդ պահանջներին։ Բ. Դուռը առաջ գալիք բոլոր չարիքների պատասխանատուութիւնը ձգում է Սօֆիայի կառավարութեան վրայ։ Մակեդոնական յանձնաժողովը հրաւիրում է թէ Բուլղարիայի և թէ Ռումինիայի բոլոր Մակեդոնացիներին մարտի 19-ին ընդհանուր ժողով գումարել. այդ ընդհանուր ժողովում պիտի քննուի, թէ ինչ միջոցներ ձեռք առնուի և ինչպէս գործեն, որ Բերլինի դաշնադրութեան 23-րդ յօդուածն իրականանայ։ Մտադրութիւն կայ բոլոր եւրոպական մեծ պետութիւններին ուղերձներ ուղարկել։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

« ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ » ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Մարտի 20-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մոսկուայում կազմակերպվում է մասնաւոր ուսումնական ճանապարհորդական ընկերութիւն կոմս Բոբրինսկու նախաձեռնութեամբ։

Մոսկուայի համալսարանի բնագիտական բաժինն աւարտող ուսանողներին առաջարկուած են ակցիզային վարչութեանց մէջ վերահսկիչների պաշտօններ այն նահանգներում, ուր մտցրած է օղիի պետական վաճառումն։

ԲԵԼԳՐԱԴ.—Նիշի մանկավարժական ճեմարանը փակուեց, նրա մէջ տեղի ունեցած անկարգութեանց պատճառով։

ՍԻՄՕՆՕՍԷԿԻ.— Լի-Հունգ Չանգի հետ բանակցութիւններ սկսած ժամանակ ճափոնացիք հետևեալ պայմաններն առաջարկեցին.— զինադադար անել, ճափոնացիները կըբռնեն Շանգհակուան, Տակու և Տեանձին, ճափոնացիները պիտի հսկեն Շանդուայն—Տեանձինի երկաթուղու չինական բոլոր նաւատորմի և զինուորական պահեստների վրայ. ճափոնացիները պիտի ստանան պատերազմական վնասները։ Լի - Հունգ - Չանգը խնդրեց որ պահանջները մեղմացնեն, այդ խնդիրը մերժուեց, դրանից յետոյ վճռեցին բանակցութիւնները շարունակել առանց զինադադարի։ Լի-Հունգ-Չանգի կեանքի դէմ փորձը Միկադոյին հարկադրեց համաձայնել զինադադար անել մինչև ապրիլի 8-ը և այդ ժամանակամիջում երկու կողմերին ևս արգելուած է իրենց զօրքի թիւն աւելացնել և ծովով փոխադրել նրանց մի տեղից միւս տեղ։ Պայմաններն ստորագրուած են։

Լի-Հունգ-Չանգի կեանքի դէմ փորձ անողը դատապարտուած է տաժանակիր աշխատանքների ցկեանս։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

Մարտի 17-ից.

Վեքսելի կուրս 3 ամսով։

Լոնդոնի վրայ 10 Փ. ստ.	93
Բերլինի վրայ 100 մարկ	45,42½
Փարիզի վրայ 100 Փր.	36,72½
Նոր կտրած պօլուիմպերիալներ	7,41 գն. 7,43 վաճ.
Բօրսայի զեղչը	5-ից 7%
4% Պետակ. արժեթղթ.	99¾
5% ոսկ. արժեթ. 1894 թ.	164
5% Առաջ. Ներքին փոխ. խաղատոմս 1864 թ.	242
5% Երկր. Ներք. փոխառ. խաղատոմս 1866 թ.	227
5% Ազնուակ. հող. բանկի գրաւակ. խաղատոմս.	242¼
5% Պետակ. երկաթուղ. արժեթուղթ	102
4% Ներքին փոխ. I սեր.	99½
" " " II "	99½
" " " III "	99½
" " " IV "	99½
4½% փոխ. 1893 թուի	101⅞
" փոխ. 1 հրատարակ.	101⅝
" փոխ. 2 հրատարակ.	101⅝
4½% Գրաւակ. արժեթղ. սոյն հողային բանկի	101⅞
4½% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր	101⅞
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.	101⅝
" " Մոսկուայի.	101½
5½% Օդեսայի	103¾
5% Թիֆլիզի	99¼ գն.
5% Գրաւակ. արժթ. հող. բանկերի Խարկովի	100½
" Պօլտավայի	100⅜
" Տուլայի	100¼
" Կիեվի	100¼
" Մոսկուայի	100¾
" Բեսարաբիայի	100¼
" Ներքին-Սամարայի	100¼
" Դօնսկոյ	100⅛
" Վիլենսկի	100
6% և 5% Քութայիսի	101 և 99½ գն.
" Թիֆլիզի	101¾ և 99½ գն.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ՝ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի ներքին և ներարդային հ.

Դ. Գ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ., համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունւում են և ՆԻՁԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան։

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

ԲԺՇԿ. ԴՈԿՏՈՐ

ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիեվսկի փողոց № 14.

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթօդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԵԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը — կինարմատներ և երեխաներ
1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան — տղամարդիկ։

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ — մասսաժ անող կին և մասսաժիստ պարոն։

Քաղաքային Հիւանդանոց

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երթևեկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին)։

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. Արծրունի — Ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր։

Կ. Ա. Ղահեանց—Ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր։

Գ. Գ. Գուլումեանց—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 12—1 ամեն օր։

Բժշկապետ Գ. Քոչարեանց. սիֆիլիս և մէզի անդ. հիւանդ. 11—12 ամեն օր։

Մ. Ա. Միրզաեան—Ներքին և վեներական, ժ. 12—1 ամեն օր բացի հինգշաբթի։

Բժ. Մ. Շահվերդեան – Ներքին հիւանդութիւն. 12—1 ամեն օր.

Բժ. Գէորգեան — Ներքին և երեխանց հիւնդ. 12 1 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խոճայեանց—կանանց ժ. 9—11 ամեն օր։

Ն. Գ. Կարամեան — Ներքին և երեխանց, ժամը 11 - 12 ամեն օր։

Կին-բժ. Լ. Ե. Մուխրանսկայա—կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Եղ. Ա. Ռոզանով — Ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր։

Մ. Ա. Ռեխտվալդ—Ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ն. Սափանեան—Ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 12—1 ամեն օր։

Գ. Ա. Թարխանեան — Ներքին և խիրուրգ., ժ. 12—1 ամեն օր։

Կին-բժ. Ս. Ա. Շմիդ—աչքի և կանանց, ժամը 12—1 ամեն օր։

Ատամն. բժ. Ա. Օ. Օրբէլի—ատամներ, ժամը 10—11 ամեն օր։

Կոնսուլտացիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրերը, ժամը 9—1։

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆՔ

(Կախեթինսկայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ա. Քալանթարեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խոճայեան – կանանց, ժ 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը

ԽԱՐՓՈՒԽԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Բաննիա փողոց, տ. Ընֆիաճեանի)

Գ. Բ. Տէր-Աստուածատրեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խոճայեան—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Տնօրէնութիւն.— Չքաւոր անձերին բժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի։

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝—
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտուայ 7 ժ. 35 րոպէին։

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պօլսի միջեւ։

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուա- 3 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով. Նովօրօսիսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սևաստոպօլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը լոյս չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին, ապրանքա մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը—լոյս հինգշաբթի, գիշերուայ 3 ժամին, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օդեսայից գալիս է Բաթում.

Երկուշաբթի օրերը - առաւօտեան, ուղիղ ընթացքով։

Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը—երեկոյեան, շրջանառու ընթացքով։

Երկուշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար շոգենաւը, շրջանառու ընթացքով,

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ՎԱՀ. ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ
ԺԱՄԱՆԱԿ ԷՐ ԽՈՐՀՈՒՐԴ ԻՒՐ
գինն է 15 կոպ.
Դիմել Կենդրոնական գրավաճառանոց.

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
Յ. ՃԱՂԱՐԲԵԿԵԱՆԻ
ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.

Գրքի նիւթը.—Գեղարուեստի տեսակները. գրականութիւնը գեղարուեստների մէջ. բանախօսութիւն (պրօզա) և բանաստեղծութիւն։ Ոճ.—պարզ ու ճիշտ, գեղարուեստական և երաժշտական ոճ. տաղաչափութիւն, շրջաբանութիւն, պատկերաւոր ոճ։ Ի՞նչպէս է կազմվում շարադրութիւնը, ինչ օրէնքների են ենթարկվում զանազան գրուածքներ՝ նկարագրութիւն, պատմութիւն, վարդապետութիւն, քնարական, վիպական և դրամատիքական բանաստեղծութիւնն իրանց բոլոր տեսակներով։ Ցաւելուած՝ թէ ինչ կէտերի պէտք է ուշ դարձնի որևէ գրքի ընթերցողը։

Ցանկացողները պէտք է դիմեն. Тифлисъ, Акопу Джагарбегіанъ.

Շուտով լոյս կը տեսնի
«ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ»
նրանց, որոնց մօտ բաժանորդագրական թերթեր կան, խնդրվում է շուտով վերադարձնել։ (3—3)

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

1) Խուլ խաչիկ, Քամալեանի . 25 կ.
2) Ֆէրիզադէի երգը, Ա. Այնօփ 25 »
3) Ղարիբ մշեցի, Ա. Ք.-ի. . 10 »
4) Տարերք բնագիտութեան, հուքսլէյի, օժանդակ ձեռնարկ ազգ. դպրոցների համար, թարգմ. Խս. Յար. . 40 »

ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

5) Վահան Մամիկոնեան, Յ. Ճարաբէգեանցի. . . . 40 »

Յ. ԹՅԻՐԵՆԻ և Կ. ԱԼԽԱՆԵԱՆԻ
ՁԻԹԱՀԱՆ և ՍԱՊՆԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

այս Մեծ պասի համար առաջարկում է քունջութի, վուշի, կանեփի յեղ՝ կերակուրի մէջ գործածելու, նմանապէս կաստորեան, կանթեղի և ներկելու համար եփած ձէթ, այլ և բարձր տեսակի սապոններ։

Ձէթերը շշերով վաճառվում են դեղատնային ապրանքների Կովկասեան ընկերութեան վաճառատանը. Ջօվանիի մօտ՝ Գոլովինսկի պրոսպեկտ, տ. Գոբրժանսկու, և Վորոնցովի արձանի մօտ՝ Փարչօ Բոկարովի մօտ, Նիկոլաեւսկայա փ., Ալէքսանդրովսկայա եկեղեցու դիմաց. Չալմալեանցի մօտ՝ Պանաօէևիչ փ., տ. № 1.

Մեծ ու փոքր վաճառվում են սեպհական խանութներում—Միքայէլեան փ. տ. Կարալեանի, Վորոնցովի արձանի մօտ. Սոլդատսկի բազարում՝ տուն Բուղդանեանի. Թուրքաց մէյդանում՝ քաղաքային խանութ. Հալաբարի հրապարակում՝ քաղաքային խանութ, և Օլգինեան փողոցում՝ տուն Միքուրնութովի։

Մեծ քանակութեամբ վաճառվում են գործարանում՝ Էրիվանսկոյէ շօսսէի վրայ, սեպհական շինութեան մէջ։ (8—8)

ՇԵՐԱՄԻ ՑԻԼԼԻՒԼԵՐ ՍԵՐՄ

ՍՊԻՏԱԿ և ԴԵՂԻՆ ՏԵՍԱԿԻ
Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ և Կ. ԱՖՐԻԿԵԱՆԻ
ՇԵՐԱՄԱՏԱՆ

Մեզանից նախկին տարիների շերամի սերմ գնողներին յայտնում ենք, որ այլ ևս սերմ չի ուղարկուելու նրանց՝ առանց իրանց պահանջելու։ Գնել ցանկացողները թող բարեհաճեն դիմել հետևեալ հասցէնով.

Тифлисъ. 1) Кавказская шелководственная станція. 2) Императорское Кавк. Общ. Сельск. Хозяйства. 3) Магазинъ Туміянца.

Лагодехи. Гренерное заведеніе И. Туміянцъ, К. Африкянцъ, въ имѣніи Туміянца. (5—5)

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՍՏԱՆԻՍԼԱՎ ՇԱՐԱԽՉԻԱՆՈՎԻ

Articles de Paris et Nouveautées. Stanislav Charakchianoff

Maison fondée en 1870

(Դվորցովայա փողոց, շտաբի հանդէպը)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՆՈՐԱՁԵՒ ԵՒ ԳԱԼԱՆՏԵՐԻԱՅԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ.—

ԿՈՐՍԵՏՆԵՐ 2 ռ. 50 կ.-ից սկսած։ ԳԼԽԱՐԿՆԵՐ տղամարդկանց համար։ ԱՆՈՒՇԱՀՈՏՈՒԹԻՒՆՆԵՐ — անուշաբոյր օծանելիք՝ գլխաւոր գործարաններից։ Ձեռնոցներ, գուլպաներ, հովանոցներ, ծաղիկներ, հովհարներ, ալբոմներ, նեսեսէրներ, պորտ-մօնէ։ Բիւրեղեայ, յաղճապակեայ զարդարանքի իրեղէններ։ Շքեղ իրեր ընծաների համար, խաղալիք և տիկնիկներ։

Օտարաքաղաքացոց պատուէրները կատարվում են ամենայն ճշգութեամբ։ (100—97)

Дозволено цензурою Тифлисъ 21-го Марта, 1895 года. Տպարան Յ. Մարտիրոսեանցի Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул., № 1—2